ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
ՀԱԱՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ _____
«_____» _______________ 2025 թ.

ՎԱՎԵՐԱՑՆՈՒՄ ԵՄ՝
ՌԵԿՏՈՐ Հ. ՋԱՔՈՅԱՆ
______________________________
«_____» _______________ 2025 թ.

# ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Մասնագիտություն՝ 052201.00.6 Բնապահպանություն և բնօգտագործում
Կրթական ծրագիր՝ 052201.02.6 Ագրոէկոլոգիա
Որակավորում՝ Շրջակա միջավայրի բակալավր

Երևան 2025

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


| | |
|---|---|
| 1. | Ծրագրի ընդհանուր բնութագիրը |
| 2. | Ծրագրի նպատակը |
| 3. | Ծրագրի տարբերակիչ առանձնահատկությունները և մրցակցային առավելությունները |
| 4. | Շրջանավարտի ընդհանրական կոմպետենցիաները |
| 5. | Շրջանավարտի մասնագիտական կոմպետենցիաները և ակնկալվող կրթական վերջնարդյունքները |
| 6. | Ծրագրի կառուցվածքը |
| 7. | Դասավանդման և ուսումնառության մեթոդները |
| 8. | Գնահատման մեթոդները |
| 9. | Կրթական ծրագրի շրջանակներում իրականացվող պրակտիկան |
| 10. | Մասնագիտական գործունեության ոլորտը և ապագա կարիերայի հնարավորու-թյունները |
| 11. | ՄԿԾ իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներ |
| 12. | ՄԿԾ իրականացման համար պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմին ներկայացվող պահանջներ |
| | Հավելվածներ |
| | Հավելված 1. Մասնագիտության կրթական ծրագրի ուսումնական պլան |
| | Հավելված 2. Մասնագիտության կրթական ծրագրի բաղադրիչների և շրջանավարտի կոմպետենցիաների համապատասխանության կառուցվածքային մատրից |
| | Հավելված 3. Բենչմարքինգ (ՄԿԾ-ի համահունչությունը նմանատիպ այլ ճանաչված ՄԿԾ-ների հետ) |
| | Հավելված 4. Աշխատանքային կիսամյակի պրակտիկայի ծրագիր |
| | Հավելված 5. Պրակտիկայի գնահատման թերթիկ |

| 1. Ծրագրի ընդհանուր բնութագիրը | |
|---|---|
| **Ֆակուլտետ** | **Ագրոնոմիական** |
| **Ամբիոն** | Անտառագիտության և ագրոէկոլոգիայի |
| **Ոլորտ/Միջոլորտային բնագավառ** | Գյուղատնտեսություն/Բնապահպանություն |
| **Մասնագիտության (մասնագիտացման) անվանումը և դասիչը** | 052201.00.6 - Բնապահպանություն և բնօգտագործում |
| **Մասնագիտության կրթական ծրագիր** | 052201.02.06 - Ագրոէկոլոգիա |
| **ՄԿԾ պատասխանատու/-ներ** | Մ. Մարկոսյան, Ս. Թամոյան, Հ. Խաչատրյան, Է. Զաքարյան |
| **Ուսուցման ձևը (առկա, հեռակա, հեռավար)** | Առկա/հեռակա |
| **Շնորհվող որակավորումը (բակալավր, մագիստրոս)** | **Շրջակա միջավայրի բակալավր** |
| **Ուսուցման լեզուն** | Հայերեն |
| **Ծրագրի մուտքի ընդհանուր պահանջներ** | Դիմորդի նախորդող կրթական մակարդակը՝ միջնակարգ ընդհանուր կրթություն կամ միջին մասնագիտական կրթություն |
| **Ուսուցման ընդհանուր տևողություն/կրեդիտ** | 4 տարի/240 կրեդիտ |
| **Որից՝** լսարանային ուսուցում (ա.թ.՝ տեսական, գործնական) | 3232 ժամ (ա.թ.՝ 1608 տեսական, 704 լաբորատոր, 920 գործնական) |
| ինքնուրույն աշխատանք | 2832 ժամ |
| քննաշրջան | 24 շաբաթ |
| պրակտիկա | 16 շաբաթ (15 կրեդիտ) |
| ամփոփիչ ատեստավորում | Դիպլոմային աշխատանք/4 շաբաթ, 10 կրեդիտ |
| արձակուրդ | 45 շաբաթ |

| 2. Ծրագրի նպատակը |
|---|
| Ծրագրի նպատակն է պատրաստել գյուղատնտեսության ոլորտի բնօգտագործման և բնապահպանության արդի մարտահրավերների բացահայտման և դրանց հաղթահարման ուղիների մշակման, նորարարական ագրոէկոտեխնոլոգիաների կիրառման գործում արհեստավարժ, միջազգային չափանիշներին և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մրցունակ ագրոէկոլոգ մասնագետներ, որոնք կկարողանան վերհանել ոլորտում առկա խնդիրները և առաջարկել դրանց լուծման մոտեցումներ: Ծրագիրը ուսանողների մոտ զարգացնում է հողերի արդյունավետ օգտագործման, |

ագրոէկոհամակարգերի արտադրողականության բարձրացման և կայունության ապահովման ուղղությամբ գիտականորեն հիմնավորված տեխնոլոգիաների կիրառման կարողություններ, մասնավորապես՝ կլիմայի փոփոխության համատեքստում: Ագրոէկոլոգ մասնագետները կկարողանան իրականացնել բնապահպանության և բնօգտագործման միջև առկա խնդիրների մեղմմանն ուղղված միջոցառումներ, վերահսկել շրջակա միջավայրի բաղադրիչների (հող, ջուր, մթնոլորտային օդ, բուսականություն, կենդանական աշխարհ) կայուն գործելակերպի ապահովման և տեխնածին աղտոտված տարածքներից էկոլոգիապես անվտանգ սննդամթերքի (արտադրանքի) ստացման, թափոնների կառավարման, հողերի վերակուլտիվացմանն ուղղությամբ կատարվող աշխատանքները:

**3. Ծրագրի տարբերակիչ առանձնահատկությունները և մրցակցային առավելությունները**

- Հայաստանի ամբողջ տարածքում առկա են ագրոլանդշաֆտների կազմավորման և կայուն կառավարման, դրանց բաղադրիչներին առնչվող ագրոէկոլոգիական խնդիրներ, որոնց լուծմամբ զբաղվում է ագրոէկոլոգը:
- Ուսանելու տարիներից սկսած ապագա մասնագետներն արդեն կարող են մասնագիտական գործունեությամբ զբաղվել ֆերմերային տնտեսություններում, ինչպես նաև ընդգրկվել ամբիոնի կողմից ընթացիկ իրականացվող ոլորտային տեղական և միջազգային գիտահետազոտական ծրագրերում:

**4. Շրջանավարտի ընդհանրական կոմպետենցիաներ (ԸԿ)**

**Ակնկալվում է, որ ՄԿԾ հաջող ավարտին ուսանողը կկարողանա**.

ԸԿ 1. Վերլուծել հասարակական իրավիճակային գործընթացները և տալ համապարփակ գնահատական՝ զարգացնելով քննադատական մտածողությունը:

ԸԿ 2. Պատշաճ մակարդակով բանավիճել և պաշտպանել սեփական կարծիքը, պահպանելով էթիկայի նորմերը:

ԸԿ 3. Օգտագործել ստացված տնտեսագիտական գիտելիքները տարբեր ոլորտներում գործունեության արդյունքների արդյունավետությունը գնահատելու համար:

ԸԿ 4. Հաղորդակցվել գրավոր և բանավոր (հայերեն և օտար լեզուներով), լուծելու համար միջանձնային, միջմշակության, մասնագիտական խնդիրները փոխհամագործակցության պայմաններում:

ԸԿ 5. Կիրառել տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական գործունեության մեջ՝ ապահովելով աշխատանքի արդյունավետության բարձրացում:

ԸԿ 6. Աշխատել թիմով, արդյունավետ շփվել գործընկերների, ղեկավարության և սպառողների հետ, զբաղվել ինքնակրթությամբ, գիտակցված պլանավորել մասնագիտական առաջընթացը:

ԸԿ 7. Օգտագործել իրավագիտական գիտելիքները գործունեության տարբեր բնագավառներում՝ պահպանելով օրենսդրական և իրավական նորմերը:

ԸԿ 8. Կիրառել առաջին օգնության վերաբերյալ ստացած գիտելիքները արտակարգ իրավիճակներում:

**5. ՄԿԾ շրջանավարտի մասնագիտական կոմպետենցիաներ (ՄԿ)**

| |
|---|
| **ՄԿԾ ավարտին ակնկալվում է, որ շրջանավարտը կկարողանա.**<br>**ՄԿ 1**. Վերլուծել բնական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը, էկոլոգիական առկա խնդիրների առաջացման պատճառներն ու հետևանքները:<br>**ՄԿ 2**. Գնահատել գյուղատնտեսության և շրջակա միջավայրի փոխադարձ ազդեցություն-ները և դրա հետևանքով առաջացած փոփոխությունները:<br>**ՄԿ 3**. Մշակել գյուղատնտեսության ոլորտի և ընդհանուր բնապահպանական խնդիրների լուծման ուղիներ:<br>**ՄԿ 4**. Կիրառել էկոլոգիապես անվտանգ արտադրանք ստանալու տեխնոլոգիաներ և գյուղատնտեսական արտադրության էկոլոգիացմանն ուղղված միջոցառումներ:<br>**ՄԿ 5**. Բացահայտել էկոլոգիական դեգրադացման պատճառները և կլիմայի փոփոխության հետևանքները, դրա մեղմմանն ու հարմարվողականությանն ուղղված միջոցառումները:<br>**ՄԿ 6**. Նախագծել գյուղատնտեսական արտադրության միջավայրի կայուն կառավարման մոդելներ՝ գյուղատնտեսության արտադրողականության կայուն մակարդակի ապահովման համատեքստում: |

| | |
|---|---|
| **ՄԿԾ վերջնարդյունքներ՝ ըստ կոմպետենցիաների խմբերի** | |
| **ՄԿ 1 վերջնարդյունքներ.** «Վերլուծել բնական ռեսուրսների օգտագործման արդյունավե-տությունը, էկոլոգիական առկա խնդիրների առաջացման պատճառները և հետևանքները»<br>ՄԿԾ ավարտին ուսանողը կկարողանա. | |
| 1.1 | Ներկայացնել բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման սկզբունքներն ու մոտեցումները |
| 1.2 | Բացահայտել էկոլոգիական խնդիրներն ըստ միջավայրի հիմնական բաղադրիչների, դրսևորման ինտենսիվության և մասշտաբների |
| 1.3 | Տարբերակել էկոլոգիական խնդիրներն ըստ մարդու գործունեության ոլորտների |
| 1.4 | Վերհանել բնական գործընթացների և մարդու ներգործության արդյունքում առաջա-ցած էկոլոգիական հիմնախնդիրները և դրանց առանձնահատկությունները |
| 1.5 | Առաջարկել մարդածին և բնական էկոլոգիական հիմնախնդիրների լուծման ուղիները |
| **ՄԿ 2 վերջնարդյունքներ.** «Գնահատել գյուղատնտեսության և շրջակա միջավայրի փոխա-դարձ ազդեցությունները և դրա հետևանքով առաջացած փոփոխությունները»<br>ՄԿԾ ավարտին ուսանողը կկարողանա. | |
| 2.1 | Հիմնավորել գյուղատնտեսական արտադրության և բնական միջավայրի փոխազդե-ցության սերտ կապը |
| 2.2 | Բացատրել մարդու գյուղատնտեսական գործունեությամբ պայմանավորված էկոլոգի-ական խնդիրների առանձնահատկությունները |
| 2.3 | Մեկնաբանել ագրոէկոհամակարգերում ընթացող հիմնական գործընթացները՝ նյու-թաէներգետիկ փոխանակումները և դրանց մարդածին ազդեցության հետևանքները |
| 2.4 | Ներկայացնել երկրագործության և անասնապահության ոլորտներում առաջացած ագրոէկոլոգիական խնդիրների բնույթը և դրանց հետևանքները |
| 2.5 | Տարբերակել գյուղատնտեսության վարման տարբեր համակարգերին բնորոշ էկոլո-գիական խնդիրները |
| 2.6 | Իրականացնել գյուղատնտեսության և շրջակա միջավայրի փոխադարձ ազդեցութ-յունների և դրա հետևանքով առաջացած փոփոխությունների վերաբերյալ ստացված տվյալների վերլուծություն |
| **ՄԿ 3 վերջնարդյունքներ.** «Մշակել գյուղատնտեսության ոլորտի և ընդհանուր բնապահպա-նական խնդիրների լուծման ուղիներ»<br>ՄԿԾ ավարտին ուսանողը կկարողանա. | |

| | |
|---|---|
| 3.1 | Տարբերակել ագրոէկոհամակարգերում էկոլոգիական ռիսկեր առաջացնող գործոնները |
| 3.2 | Մեկնաբանել ագրոէկոլոգիական խնդիրների բնույթը, ուժգնությունը, ուղղվածությունը, դրսևորման հնարավորություններն ըստ գյուղատնտեսության վարման մակարդակի |
| 3.3 | Ներկայացնել ագրոէկոլոգիական խնդիրները ՀՀ լանդշաֆտային տարբեր գոտիներում և տեխնածին ազդեցության պայմաններում |
| 3.4 | Նկարագրել թափոնների կայուն կառավարման մոտեցումները և վերաօգտագործման նորարարական տեխնոլոգիաները |
| 3.5 | Ներկայացնել կենսաբազմազանության պահպանության էկոլոգիական հիմնախնդիրները և դրանց լուծմանն ուղղված միջոցառումները |
| 3.6 | Առաջարկել ըստ ՀՀ տարբեր գոտիների/տարածքների առանձնահատկությունների ագրոէկոտուրիզմի զարգացմանն ուղղված միջոցառումներ |
| 3.7 | Կազմել գյուղատնտեսության ոլորտի և ընդհանուր բնապահպանական խնդիրների լուծման ուղիների նախագիծ |
| **ՄԿ 4 վերջնարդյունքներ.** «Կիրառել էկոլոգիապես անվտանգ արտադրանք ստանալու տեխնոլոգիաներ և  գյուղատնտեսական արտադրության էկոլոգիացմանն ուղղված միջոցառումներ»<br>ՄԿԾ ավարտին ուսանողը կկարողանա. | |
| 4.1 | Իմանալ էկոլոգիապես անվտանգ արտադրանք ստանալու արդիականությունն ու կապը մարդու առողջության հետ |
| 4.2 | Ներկայացնել էկոլոգիապես անվտանգ սննդամթերքի էկոլոգիաթունաբանական նորմավորման սկզբունքները |
| 4.3 | Ուսումնասիրել էկոլոգիապես անվտանգ գյուղատնտեսական արտադրանքի ստացման տեխնոլոգիաները |
| 4.4 | Տարբերակել սննդամթերքի և կերի աղտոտիչներն ու դրանց ազդեցության բնույթը |
| 4.5 | Մեկնաբանել գյուղատնտեսական արտադրության էկոլոգիացման անհրաժեշտությունը և դրա բնապահպանական նշանակությունը |
| 4.6 | Իրականացնել գյուղատնտեսական արտադրության էկոլոգիացմանն ուղղված միջոցառումներ |
| **ՄԿ 5 վերջնարդյունքներ.** «Բացահայտել էկոլոգիական դեգրադացման պատճառները և կլիմայի փոփոխության հետևանքները, դրա մեղմմանն ու հարմարվողականությանն ուղղված միջոցառումները»<br>ՄԿԾ ավարտին ուսանողը կկարողանա. | |
| 5.1 | Թվարկել էկոլոգիական դեգրադացման պատճառները կապված ագրարային արտադրության կազմակերպման հետ |
| 5.2 | Մշակել միջոցառումներ էկոլոգիական դեգրադացման կանխման ուղղությամբ |
| 5.3 | Բացահայտել կլիմայի փոփոխության պատճառահետևանքային կապերը ագրարային ոլորտում |
| 5.4 | Տարբերակել ջերմոցային գազերի հիմնական տեսակները, արտանետման աղբյուրները |
| 5.5 | Նշել գյուղատնտեսական արտադրության առանձնահատկությունները կլիմայի փոփոխության համատեքստում |
| 5.6 | Կիրառել կլիմայակայուն գործելակերպ՝ ուղղված կլիմայի փոփոխության մեղմմանն ու հարմարվողականությանը |

| **ՄԿ 6 վերջնարդյունքներ.** «Նախագծել գյուղատնտեսական արտադրության միջավայրի կայուն կառավարման մոդելներ՝ գյուղատնտեսության արտադրողականության կայուն մակարդակի ապահովման համատեքստում»<br>ՄԿԾ ավարտին ուսանողը կկարողանա. | |
|---|---|
| 6.1 | Ներկայացնել կայուն զարգացման նպատակները և դրանց իրագործման մոտեցումները |
| 6.2 | Հիմնավորել գյուղատնտեսական արտադրության միջավայրի կայուն կառավարման անհրաժեշտությունը |
| 6.3 | Թվարկել գյուղատնտեսական արտադրության միջավայրի կայուն կառավարման ագրոէկոլոգիական սկզբունքները |
| 6.4 | Մշակել օպտիմալ կառուցվածքով ագրոլանդշաֆտների ձևավորման մոտեցումներ և մեթոդաբանություն, որը միտված կլինի լանդշաֆտային պլանավորմանը, ագրոանտառաբուծական համակարգերի ներդրմանը |
| 6.5 | Կատարել շրջակա միջավայրի ազդեցությունների և ագրոէկոլոգիական ցուցանիշների գնահատում և վերլուծություն |
| 6.6 | Մշակել գյուղատնտեսական արտադրության միջավայրի ագրոէկոլոգիական սկզբունքներին համապատասխան կայուն կառավարման մոդելներ |

| **6. Ծրագրի կառուցվածքը** | |
|---|---|
| **6.1. Ուսումնական պլան (հավելված 1)** | |
| **6.2.** Մասնագիտության կրթական ծրագրի բաղադրիչների և շրջանավարտի կոմպետենցիաների համապատասխանության կառուցվածքային մատրից **(հավելված 2)** | |
| **6.3.** Բենչմարքինգ (ՄԿԾ-ի համահունչությունը նմանատիպ այլ ճանաչված ՄԿԾ-ների հետ **(հավելված 3)** | |
| **6.4. Ծրագրի առարկաների համառոտ նկարագիրը** | |
| **Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ** | |
| **Մասնագիտական կրթական ծրագիրը** | Ագրոէկոլոգիա |
| **Դասընթացի ծածկագիրը** | |
| **Դասընթացի անվանումը** | Բուսաբանություն |
| **Դասընթացի տեսակը** | Պարտադիր |
| **Դասավանդման լեզուն** | Հայերեն |
| **Կրեդիտները (ECTS)** | 8 |
| **Դասընթացի անցկացման կիսամյակը** | 1-ին կիսամյակ |
| **Մուտքային պահանջներ** | Մուտքային պահանջներ չկան |

| | |
|---|---|
| **Դասընթացի նպատակը** | Ուսանողների մոտ ձևավորել հիմնական հասկացությունները կենդանի օրգանիզմների բջջային կառուցվածքի, բույսերի կյանքի կազմակերպման մակարդակների մասին, ծանոթացնել բույսերի անատոմիական և մորֆոլոգիական կառուցվածքային առանձնահատկություններին, կենսական գործառույթներին, բույսերի բազմացման եղանակներին, բուսական աշխարհի բազմազանության դասակարգման սկզբունքներին, կարգաբանական խմբերի ֆիլոգենետիկ կապերին և էվոլյուցիայի տարբեր ուղղություններին: |
| **Դասընթացի վերջնարդյունքներ** | **Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.**<br>1. Ներկայացնել բուսաբանության խնդիրները և ժամանակակից մեթոդները:<br>2. Տարբերակել բույսերի, բույսերի օրգանների մորֆոլոգիական և անատոմիական կառուցվածքային առանձնահատկությունները:<br>3. Մեկնաբանել բույսերի դասակարգման հիմունքները:<br>4. Տարբերակել օրգանիզմներն ըստ բջջային կազմության, կենսակերպի, արտաքին և ներքին կառուցվածքի, բազմացման առանձնահատկությունների և մորֆոլոգիական հատկանիշների:<br>5. Ներկայացնել կենսաբանական օբյեկտների ուսումնասիրության, նկարագրության, դասակարգման և նույնականացման մեթոդները:<br>6. Որոշիչների օգնությամբ և ըստ մորֆոլոգիական հատկանիշների տարբերակել բուսատեսակների ընտանիքները, ցեղերը և տեսակները, վայրի և մշակովի բույսերը: |
| **Դասավանդման և ուսումնառության մեթոդները** | **Դասավանդման մեթոդներ**՝ ինտերակտիվ դասախոսություն, նյութի վերլուծություն, քննարկումների, բանավեճերի վարում, ուսուցողական ֆիլմերի, տեսանյութերի դիտում բացատրական-ցուցադրական, արտալսարանային դասախոսություններ, կլոր սեղան, թիմային աշխատանք, մտագրոհ<br><br>**Ուսումնառության մեթոդներ**՝ դասախոսության ունկնդրում, ուսումնամեթոդական և էլեկտրոնային գրականության ուսումնասիրություն, մասնագիտական տեսանյութերի և հեռուստահաղորդումների դիտում, ինքնուրույն աշխատանքների կատարում |
| **Գնահատման մեթոդներ** | Թեստ, ինքնուրույն աշխատանքի գնահատում |
| **Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ** | |
| **Մասնագիտական կրթական ծրագիրը** | Ագրոէկոլոգիա |
| **Դասընթացի ծածկագիրը** | |
| **Դասընթացի անվանումը** | Հայոց լեզու |

| | |
|---|---|
| **Դասընթացի տեսակը** | Պարտադիր |
| **Դասավանդման լեզուն** | Հայերեն |
| **Կրեդիտները (ECTS)** | 2 |
| **Դասընթացի անցկացման կիսամյակը** | 1-ին կիսամյակ |
| **Մուտքային պահանջներ** | Մուտքային պահանջներ չկան |
| **Դասընթացի նպատակը** | Ամրապնդել լեզվական համակարգի վերաբերյալ նախնական գիտելիքները և իմացության շրջանակը, զարգացնել ուսանողների լեզվամտածողությունը, հարստացնել գործուն բառապաշարը, սովորեցնել բանավոր և գրավոր խոսքում օգտագործել բազմիմաստ բառեր, հոմանիշներ, հականիշներ, համանուններ, դարձվածքներ, վերլուծել մասնագիտական տեքստերը: |
| **Դասընթացի վերջնարդյունքներ** | **Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.**<br>1. Արտահայտել սեփական մտքերն անկաշկանդ, բանավոր և գրավոր կապակցված խոսքով՝ ապահովելով գրական հայերեն խոսքին ներկայացվող բոլոր պահանջները՝ ուղղախոսական, ուղղագրական, բառապաշարային, քերականական, ոճական, տրամաբանական:<br>2. Բանավոր և գրավոր խոսքում տարբերել բազմիմաստ բառերի նշանակությունները՝ ելնելով տեքստի բովանդակությունից, ընկալել հոմանիշների և հականիշների ոճական արժեքը, բառերի ու դարձվածքների փոխաբերական իմաստները:<br>3. Կազմել տեխնիկական բնույթի տեքստեր կամ գործնական գրություններ, դրանք լեզվական ընդունված կաղապարներով ներկայացնելու, զեկուցումներով հանդես գալու:<br>4. Օգտագործել դասագրքերը, բառարանները, տեղեկատվական տեխնոլոգիաները, համացանցը՝ գիտելիքները հարստացնելով լեզվին, խոսքին և հաղորդակցությանը վերաբերող այլ նյութերով: |
| **Դասավանդման և ուսումնառության մեթոդները** | **Դասավանդման մեթոդներ**՝ ԽԻԿ համակարգի (խթանում, իմաստավորում, կշռադատում) կիրառում, մտագրոհ, «ձնագնդի» մեթոդ, զրույց և այլն, ինքնուրույն աշխատանք, անդրադարձ-ամփոփում<br><br>**Ուսումնառության մեթոդներ**՝ ուսումնամեթոդական գրականության օգտագործում, գործնական և ինքնուրույն աշխատանքների կատարում |
| **Գնահատման մեթոդներ** | Թեստեր, ինքնուրույն աշխատանք |
| **Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ** | |
| **Մասնագիտական կրթական ծրագիրը** | Ագրոէկոլոգիա |

| | |
|---|---|
| **Դասընթացի ծածկագիրը** | |
| **Դասընթացի անվանումը** | Հայոց պատմություն |
| **Դասընթացի տեսակը** | Պարտադիր |
| **Դասավանդման լեզուն** | Հայերեն |
| **Կրեդիտները (ECTS)** | 2 |
| **Դասընթացի անցկացման կիսամյակը** | 1-ին կիսամյակ |
| **Մուտքային պահանջներ** | Մուտքային պահանջներ չկան |
| **Դասընթացի նպատակը** | Խորացնել ուսանողների գիտելիքները պատմության վերաբերյալ, զարգացնել պատմատրամաբանական մտածողությունը և հնարավոր բարդ իրադրություններում ճիշտ կողմնորոշվելու կարողությունը: |
| **Դասընթացի վերջնարդյունքներ** | **Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.**<br>1. Կիրառել քննադատական մտածողություն անցյալի և ներկայի պատմական դեպքերը գնահատելիս:<br>2. Հենվել պատմական փաստերի քննական վերլուծության վրա՝ ներկայիս քաղաքական գործընթացները գնահատելիս:<br>3. Ներկայացնել իրադարձությունները և վերլուծել ժամանակի և տարածության մեջ (աշխարհագրական դիրք, բնական ռեսուրսներ և այլն):<br>4. Գնահատել աշխարհաքաղաքական իրողության հաշվառմամբ զարգացման ժամանակակից միտումները:<br>5. Պատրաստել և ներկայացնել պատմական թեմաներով ինքնուրույն աշխատանք, վարել բանավեճեր՝ պահպանելով էթիկայի կանոնները: |
| **Դասավանդման և ուսումնառության մեթոդները** | **Դասավանդման մեթոդներ՝** ինտերակտիվ դասախոսություն, նյութի վերլուծություն, քննարկումների, բանավեճերի վարում, ուսուցողական ֆիլմերի, տեսանյութերի դիտում բացատրական-ցուցադրական, արտալսարանային դասախոսություններ, կլոր սեղան, թիմային աշխատանք, մտագրոհ<br><br>**Ուսումնառության մեթոդներ՝** դասախոսության ունկնդրում, ուսումնամեթոդական և էլեկտրոնային գրականության ուսումնասիրություն, մասնագիտական տեսանյութերի և հեռուստահաղորդումների դիտում, ինքնուրույն աշխատանքների կատարում |
| **Գնահատման մեթոդներ** | Թեստային աշխատանք, ինքնուրույն աշխատանք |
| **Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ** | |
| **Մասնագիտական կրթական ծրագիրը** | Ագրոէկոլոգիա |

| | |
|---|---|
| **Դասընթացի ծածկագիրը** | |
| **Դասընթացի անվանումը** | Օտար լեզու (ռուսաց լեզու) |
| **Դասընթացի տեսակը** | Պարտադիր |
| **Դասավանդման լեզուն** | Ռուսերեն |
| **Կրեդիտները (ECTS)** | 4 |
| **Դասընթացի անցկացման կիսամյակը** | 1-ին կիսամյակ |
| **Մուտքային պահանջներ** | Ա 1 մակարդակ. մուտքային պահանջներ չկան:<br>Ա 2 մակարդակ. ուսանողը պետք է ունենա Ա 1 մակարդակով նախատեսված գիտելիքներ, կարողություններ և հմտություններ (ստուգվում է թեստի օգնությամբ): |
| **Դասընթացի նպատակը** | Ա 1 մակարդակի նպատակն է՝ ձևավորել/զարգացնել ռուսաց լեզվով առօրյայում, հանրային, կրթական, սոցիալական, մշակութային ոլորտներում հաղորդակցվելու կարողությունը:<br>Ա 2 մակարդակի նպատակն է՝ բառապաշարի ընդլայնում առօրյա, սոցիալական, մշակութային, կրթական, գիտահանրամատչելի ոլորտներում, ռուսերեն գիտահանրամատչելի և ուսումնական գրականության հետ ինքնուրույն աշխատանքի հմտության զարգացում: |
| **Դասընթացի վերջնարդյունքներ** | **Ա 1 մակարդակ. ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա.**<br>1. Կիրառել հաղորդակցության նպատակին համապատասխանող լեզվական միջոցներ, տեղեկատվության կանոններ և սկզբունքներ:<br>2. Օգտագործել ռուսաց լեզուն միջանձնային հաղորդակցության մեջ:<br>3. Դուրս բերել ռուսերեն բնօրինակ պարզ տեքստերից անհրաժեշտ տեղեկատվությունը:<br>**Ա 2 մակարդակ. ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա.**<br>1. Կիրառել մասնագիտական, կրթական ոլորտում հաղորդակցության համար անհրաժեշտ լեզվական միջոցներ, տեղեկատվության կանոններ և սկզբունքներ:<br>2. Օգտագործել ռուսաց լեզուն միջանձնային հաղորդակցության ընթացքում մասնագիտական խնդիրները լուծելիս:<br>3. Դուրս բերել ռուսերեն բնօրինակ մասնագիտական տեքստերից անհրաժեշտ տեղեկատվություն: |
| **Դասավանդման և ուսումնառության մեթոդները** | **Դասավանդման մեթոդներ**՝ բացատրություն, տեսալսողական, ինդուկտիվ, համադրության մեթոդներ<br><br>**Ուսումնառության մեթոդներ**՝ գրավոր աշխատանք, խոսքային մեթոդ, քննարկում, ուսուցողական խաղեր |
| **Գնահատման մեթոդներ** | Թեստեր, ինքնուրույն աշխատանք |

| Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ | |
|---|---|
| **Մասնագիտական կրթական ծրագիրը** | Ագրոէկոլոգիա |
| **Դասընթացի ծածկագիրը** | |
| **Դասընթացի անվանումը** | Բարձրագույն մաթեմատիկա |
| **Դասընթացի տեսակը** | Պարտադիր |
| **Դասավանդման լեզուն** | Հայերեն |
| **Կրեդիտները (ECTS)** | 6 |
| **Դասընթացի անցկացման կիսամյակը** | 1-ին կիսամյակ |
| **Մուտքային պահանջներ** | Մուտքային պահանջներ չկան |
| **Դասընթացի նպատակը** | Բարձրագույն մաթեմատիկայի դասընթացը ապագա ուսանողների համար մաթեմատիկական կրթության հիմքն է: Բարձրագույն մաթեմատիկայի յուրացումը լայն հնարավորություն է ընձեռում գործնականում զարգացնել տրամաբանական, ինքնուրույն գործունեության և ստեղծագործական ունակությունները: |
| **Դասընթացի վերջնարդյունքներ** | **Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.**<br>1. Սահմանել բարձրագույն մաթեմատիկայի պարզագույն խնդիրները, հստակ իրականացնել դրանց լուծման մեթոդները:<br>2. Կատարել մաթեմատիկական գործողություններ դիֆերենցիալ և ինտեգրալ հաշվի մեթոդների օգնությամբ,<br>3. Կիրառել գծային հանրահաշվի, մաթեմատիկական անալիզի և հավանականությունների տեսության բաժիններից ստացած գիտելիքները կիրառական խնդիրներում:<br>4. Լուծել կիրառական խնդիրները և գնահատել դրանց լուծման հնարավոր ուղիները:<br>5. Կիրառել հետազոտական հիմնական մեթոդներ գործնական խնդիրներ լուծելիս: |
| **Դասավանդման և ուսումնառության մեթոդները** | **Դասավանդման մեթոդներ՝** դասախոսություն, լաբորատոր պարապմունքներ, տեսական նյութի մատուցում և համապատասխան խնդիրների քննարկում, գործնական խնդիրների լուծում<br><br>**Ուսումնառության մեթոդներ՝** կատարել համապատասխան հանձնարարությունները, կիրառական խնդիրների ուսումնասիրություն, դրանց համապատասխան տնային հանձնարարությունների կատարում, համապատասխան խնդիրների ինքնուրույն վերլուծություն, հասկանալ տվյալ խնդրի կիրառական նշանակությունը |
| **Գնահատման մեթոդներ** | Ընթացիկ և վերջնական ստուգումներ, որոնք իրականացվում են հաճախումների և ինքնուրույն աշխատանքների, միջանկյալ |

| | |
|---|---|
| | և ամփոփիչ քննությունների արդյունքներով, միջանկյալ և ամփոփիչ քննություններ՝ թեստային տարբերակով |
| **Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ** | |
| **Մասնագիտական կրթական ծրագիրը** | Ագրոէկոլոգիա |
| **Դասընթացի ծածկագիրը** | |
| **Դասընթացի անվանումը** | Կիրառական ինֆորմատիկա |
| **Դասընթացի տեսակը** | Պարտադիր |
| **Դասավանդման լեզուն** | Հայերեն |
| **Կրեդիտները (ECTS)** | 6 |
| **Դասընթացի անցկացման կիսամյակը** | 1-ին կիսամյակ |
| **Մուտքային պահանջներ** | Մուտքային պահանջներ չկան |
| **Դասընթացի նպատակը** | Ուսումնասիրել ինֆորմացիայի մշակման և վերլուծության եղանակներն ու մեթոդները, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունները ոլորտային խնդիրները լուծելիս և ուսանողի մոտ ձևավորել բազային գիտելիքներ, հմտություններ ու կարողություններ՝ օֆիսային և մասնագիտական ծրագրային միջոցների կիրառման համար: |
| **Դասընթացի վերջնարդյունքներ** | **Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.**<br>1. Ներկայացնել տվյալների հավաքագրման, մշակման և վերլուծության մեթոդներն ու գործիքակազմը՝ համակարգչային տեխնոլոգիաներով:<br>2. Ներկայացնել համակարգչի տեխնիկական և ծրագրային միջոցների դերակատարությունը, ժամանակակից կիրառական ծրագրային միջոցների հնարավորությունները:<br>3. Մշակել մասնագիտական ոլորտին վերաբերող էլեկտրոնային փաստաթղթեր, մասնագիտական ոլորտին վերաբերող պարզ տվյալների բազաներ՝ օգտագործելով տեղեկատվական տեխնոլոգիաներ և պատրաստել մասնագիտական ոլորտին վերաբերող շնորհանդեսներ:<br>4. Վերլուծել տվյալներ՝ օֆիսային և մասնագիտական ծրագրային միջոցների գործիքակազմի կիրառմամբ, կառուցելով միասնական տվյալների բազա:<br>5. Միավորել համակարգչային ծրագրային ապահովման գիտելիքներն ու հմտությունները՝ ընդհանուր նշանակության և մասնագիտական ոլորտի խնդիրներ լուծելու համար:<br>6. Գնահատել մասնագիտական գործունեության արդյունավետությունը համակարգչային ծրագրերի գործիքախմբի օգտագործման միջոցով և մեկնաբանել համակարգչային վերլուծության արդյունքները: |

| | |
|---|---|
| **Դասավանդման և ուսումնառության մեթոդները** | **Դասավանդման մեթոդներ**՝ ներկայացում վիզուալիզացիա, երկխոսություն, խմբակային քննարկում<br><br>**Ուսումնառության մեթոդներ՝** համակարգչային խնդիրների լուծում, ուսումնամեթոդական գրականության և այլ նյութերի ուսումնասիրում, առաջադրանքների կատարում MS Office փաթեթի ծրագրակազմի օգնությամբ, լսարանային առաջադրանքների կատարում՝ կիրառելով MS Office փաթեթի ծրագրակազմը |
| **Գնահատման մեթոդներ** | Ինքնուրույն աշխատանք, միջանկյալ և ամփոփ քննություն, թեստեր |
| **Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ** | |
| **Մասնագիտական կրթական ծրագիրը** | Ագրոէկոլոգիա |
| **Դասընթացի ծածկագիրը** | |
| **Դասընթացի անվանումը** | Գյուղատնտեսության էկոնոմիկա |
| **Դասընթացի տեսակը** | Պարտադիր |
| **Դասավանդման լեզուն** | Հայերեն |
| **Կրեդիտները (ECTS)** | 3 |
| **Դասընթացի անցկացման կիսամյակը** | 2-րդ կիսամյակ |
| **Մուտքային պահանջներ** | Դասընթացը տրամաբանորեն փոխկապակցված է «Բարձրագույն մաթեմատիկա» առարկայի հետ: |
| **Դասընթացի նպատակը** | Ձևավորել հիմնարար գիտելիքներ, կարողություններ և գործնական հմտություններ գյուղատնտեսության ոլորտի ներկայիս խնդիրների վերհանման, արդյունավետության գնահատման, ֆինանսավորման ուղղությունների ընտրության և պետական աջակցության ծրագրերի ներգրավման գործում: |
| **Դասընթացի վերջնարդյունքներ** | **Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.**<br>1. Ներկայացնել ագրարային ոլորտի հիմնական հասկացությունները ու հայեցակարգերը, լուսաբանել արտադրության տնտեսական հիմունքները:<br>2. Տարբերակել արտադրական ռեսուրսային ներուժի վիճակի գնահատման և արդյունավետ օգտագործման մեթոդները:<br>3. Հիմնավորել գյուղատնտեսական արտադրության արդյունավետ մասնագիտացման, կենտրոնացման, կոոպերացման և ինտեգրման գործընթացների տնտեսական նշանակությունը:<br>4. Ներկայացնել ագրարային ոլորտի աշխատանքային ռեսուրսների առանձնահատկությունները ու դրանց արդյունավետ օգտագործման ցուցանիշների համակարգը:<br>5. Պարզաբանել արտադրական ծախսերի, դրանց կազմավորման վրա ազդող գործոնների և ծախսերի 20 օպտիմա- |

| | |
|---|---|
| | լացման ուղիները:<br>6. Մեկնաբանել գյուղատնտեսական արտադրանքների գնա-գոյացման կառուցակարգը |
| **Դասավանդման և ուսումնառության մեթոդները** | Դասախոսություն, լաբորատոր աշխատանք, հաշվարկների կատարում, տեսական նյութի բացատրություն, ցուցադրական նյութի էլեկտրոնային ներկայացում, խմբային քննարկում, գրավոր հանձնարարական-քննարկումներ |
| **Գնահատման մեթոդներ** | Ինքնուրույն աշխատանք, միջանկյալ և ամփոփիչ քննություններ, թեստեր |
| **Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ** | |
| **Մասնագիտական կրթական ծրագիրը** | Ագրոէկոլոգիա |
| **Դասընթացի ծածկագիրը** | |
| **Դասընթացի անվանումը** | Օտար լեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն) |
| **Դասընթացի տեսակը** | Պարտադիր |
| **Դասավանդման լեզուն** | Անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն |
| **Կրեդիտները (ECTS)** | 8 |
| **Դասընթացի անցկացման կիսամյակը** | 2-րդ կիսամյակ |
| **Մուտքային պահանջներ** | Մուտքային պահանջներ չկան |
| **Դասընթացի նպատակը** | Բարձրացնել օտար լեզվի իմացության մակարդակը, զարգաց-նել հաղորդակցական կարողությունը |
| **Դասընթացի վերջնարդյունքներ** | **Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.**<br>1. Թարգմանել տեքստեր:<br>2. Վերարտադրել կարդացած տեքստը:<br>3. Վերլուծել ընթերցած տեքստը օտար լեզվով:<br>4. Գործածել բավականաչափ քերականական կառույցներ:<br>5. Հաղորդակցվել անցած թեմաների շուրջ: |
| **Դասավանդման և ուսումնառության մեթոդները** | **Դասավանդման մեթոդներ**՝ «մտագրոհ», խճանկարի մեթոդ, անհատական աշխատանք, բանավեճ, ֆիլմերի դիտում, լսողական վարժություններ, երկխոսություն, քննարկումներ, թիմային աշխատանքներ, տեսաաահիկներով ներկայացում<br><br>**Ուսումնառության մեթոդներ՝** տեքստերի թարգմանություն, զրույց |
| **Գնահատման մեթոդներ** | Գնահատման նախատեսվող ձևն ըստ ուսումնական պլանի՝ քննություն: |
| **Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ** | |
| **Մասնագիտական կրթական ծրագիրը** | Ագրոէկոլոգիա |
| **Դասընթացի ծածկագիրը** | |

| | |
|---|---|
| **Դասընթացի անվանումը** | Հասարակագիտական առարկաների մոդուլ (Հայոց պատմություն, մշակութաբանություն, քաղաքագիտություն, փիլիսոփայություն) |
| **Դասընթացի տեսակը** | Պարտադիր |
| **Դասավանդման լեզուն** | Հայերեն |
| **Կրեդիտները (ECTS)** | 6 |
| **Դասընթացի անցկացման կիսամյակը** | 2-րդ կիսամյակ |
| **Մուտքային պահանջներ** | Մուտքային պահանջներ չկան |
| **Դասընթացի նպատակը** | Նպաստել ուսանողների աշխարհայացքի ընդլայնմանը, քաղաքացիական դիրքորոշում ունենալու կարողության ձևավորմանը, ուսանողների մոտ հետաքրքրություն արթնացնել հումանիտար գիտությունների և արվեստի նկատմամբ, ձևավորել հասարակության առնչվող խնդիրների նկատմամբ այլընտրանքային մոտեցումներ ցուցաբերելու կարողություն, նպաստել համամարդկային արժեքների համատեքստում ազգային պատմության և մշակույթի արժևորմանը, ուսանողների մշակութային ճաշակի զարգացմանը: |
| **Դասընթացի վերջնարդյունքներ** | **Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.**<br>1. Հիմնավորել սեփական տեսակետներն ու դիրքորոշումները հասարակական երևույթները գնահատելիս:<br>2. Քննադատորեն վերլուծել և ամփոփել հասարակական գործընթացներին վերաբերող տեղեկատվությունը:<br>3. Բանավիճել՝ պահպանելով փաստարկման կանոնները (այդ թվում՝ էթիկական):<br>4. Ներկայացնել գաղափարների ազդեցությունը հասարակության զարգացման վրա (փիլիսոփայական միտք, քաղաքական գաղափարներ, մշակութային ձեռքբերումներ):<br>5. Բնութագրել ազգային յուրահատկությունները մշակութային բազմազանության համատեքստում: |
| **Դասավանդման և ուսումնառության մեթոդները** | **Դասավանդման մեթոդներ՝** տեղեկատվական և ակնարկային դասախոսություններ, տեսական նյութի ներկայացում և բացատրություն, զննական ճանաչողական-ստեղծագործական, համագործակցային ուսուցման մեթոդներ, թեմատիկ քննարկումներ և բանավեճեր, հարց և պատասխան, կլոր սեղան, թիմային աշխատանք<br><br>**Ուսումնառության մեթոդներ՝** դասախոսության ունկնդրում, ուսումնամեթոդական, էլեկտրոնային գրականության ուսումնասիրում, մասնագիտական տեսանյութերի և հեռուստահաղորդումների դիտում, ինքնուրույն աշխատանքների կատարում, ինտերակտիվ քննարկումներ |
| **Գնահատման մեթոդներ** | Թեստեր, ինքնուրույն աշխատանք |

| Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ | |
|---|---|
| **Մասնագիտական կրթական ծրագիրը** | Ագրոէկոլոգիա |
| **Դասընթացի ծածկագիրը** | |
| **Դասընթացի անվանումը** | Ֆիզիկա կենսաֆիզիկայի հիմունքներով |
| **Դասընթացի տեսակը** | Պարտադիր |
| **Դասավանդման լեզուն** | Հայերեն |
| **Կրեդիտները (ECTS)** | 5 |
| **Դասընթացի անցկացման կիսամյակը** | 2-րդ կիսամյակ |
| **Մուտքային պահանջներ** | Մուտքային պահանջներ չկան |
| **Դասընթացի նպատակը** | Ուսանողներին հաղորդել բնության երևույթների, նյութերի կառուցվածքի և փոխակերպումների, կենդանի և անկենդան համակարգերում ընթացող ֆիզիկական երևույթների վերաբեր-յալ համակողմանի գիտելիքներ, լաբորատոր աշխատանքների միջոցով ձևավորել ունակություններ փորձարարական չափիչ և ախտորոշիչ սարքերից օգտվելու, ստացված արդյունքները մեկնաբանելու և համակարգելու համար: |
| **Դասընթացի վերջնարդյունքներ** | **Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.**<br>1. Պատկերացնել յուրաքանչյուր ագրոպրոցեսում, առանձին սարքավորումներում և հոսքագծերի աշխատանքային սկզբունքներում ֆիզիկական պրոցեսների կիրառման մեխանիզմը:<br>2. Կիրառել ֆիզիկայի փորձնական եղանակները ագրոպրո-ցեսների արդյունքում ստացված արտադրանքի որակի հետազոտություններում:<br>3. Կիրառել ագրոպրոցեսների կազմակերպման, անհրաժեշտ սարքավորումների, դրանց քանակությունների ընտրութ-յան, հիմնական և օժանդակ շինությունների մակերեսների, էներգիական հզորությունների, ֆիզիկատեխնիկական վերահսկման խնդիրներում:<br>4. Կիրառել ֆիզիկայի բնագավառի տեսական գիտելիքները ագրոարտադրական գործընթացներում՝ նոր տեխնոլոգիա-ների ներդրման և զարգացման նպատակով:<br>5. Կատարել ագրոսարքավորումների, տարրողությունների և հզորությունների ընթացիկ հաշվարկ: |
| **Դասավանդման և ուսումնառության մեթոդները** | **Դասավանդման մեթոդներ՝** դասախոսություն, լաբորատոր աշխատանք,  անիմացիոն նյութերի ցուցադրում և մեկնաբանում<br><br>**Ուսումնառության մեթոդներ՝** տեսական նյութի յուրացում, լաբորատոր և ինքնուրույն աշխատանքների պատրաստում |

| | |
|---|---|
| **Գնահատման մեթոդներ** | Ընթացիկ և վերջնական ստուգումներ, որոնք իրականացվում են հաճախումների և ինքնուրույն աշխատանքների, միջանկյալ և ամփոփիչ քննությունների արդյունքների հիման վրա: |
| **Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ** | |
| **Մասնագիտական կրթական ծրագիրը** | Ագրոէկոլոգիա |
| **Դասընթացի ծածկագիրը** | |
| **Դասընթացի անվանումը** | Հայոց լեզու և խոսքի մշակույթ |
| **Դասընթացի տեսակը** | Պարտադիր |
| **Դասավանդման լեզուն** | Հայերեն |
| **Կրեդիտները (ECTS)** | 2 |
| **Դասընթացի անցկացման կիսամյակը** | 2-րդ կիսամյակ |
| **Մուտքային պահանջներ** | Դասընթացը տրամաբանորեն փոխկապակցված է «Հայոց լեզու» առարկայի հետ: |
| **Դասընթացի նպատակը** | Ձևավորել գրագետ և տրամաբանված բանավիճելու կարողություն, քննադատական մտածողություն, ինչը կնպաստի ուսանողի ինքնադրսևորմանը ոչ միայն մասնագիտական ոլորտում, այլև հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: |
| **Դասընթացի վերջնարդյունքներ** | **Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.**<br>1. Սահմանել լեզվական և խոսքային կաղապարների ընդհանրություններն ու տարբերությունները:<br>2. Օգտագործել ստացած գիտելիքները բանավոր և գրավոր խոսք կազմելիս:<br>3. Իրականացնել հաղորդակցում տարբեր իրադրություններում:<br>4. Կատարել լեզվական տարաբնույթ վարժություններ՝ օգտագործելով տեխնիկական, պաշտոնական կամ գիտական ոճերին հատուկ բառապաշար:<br>5. Օգտագործել տեղեկատվական տեխնոլոգիաները, համացանցը՝ գիտելիքները հարստացնելով լեզվին, խոսքին և հաղորդակցությանը վերաբերող այլ նյութերով: |
| **Դասավանդման և ուսումնառության մեթոդները** | **Դասավանդման մեթոդներ՝** ակտիվ և ինտերակտիվ մեթոդներ, մտագրոհ, ձնագնդի, բանավեճ-քննարկում, «կլոր սեղան» (որևէ հարցի քննարկում, կարծիքների համեմատություն, մտքերի, գաղափարների ձևավորում, արտահայտում), «ուղեղի փոթորիկ» (լուծումների, մտքերի հավաք, բոլոր առաջարկների վերլուծություն և ամենահետաքրքիր տարբերակի ընտրություն)<br><br>**Ուսումնառության մեթոդներ՝** երկխոսություն, քննարկումներ, ինքնուրույն, թիմային աշխատանքներ, զեկուցումներ, ելույթներ, բանավեճեր |

| | |
|---|---|
| **Գնահատման մեթոդներ** | Թեստեր, ինքնուրույն աշխատանք |
| **Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ** | |
| **Մասնագիտական կրթական ծրագիրը** | Ագրոէկոլոգիա |
| **Դասընթացի ծածկագիրը** | |
| **Դասընթացի անվանումը** | Ընդհանուր քիմիա |
| **Դասընթացի տեսակը** | Պարտադիր |
| **Դասավանդման լեզուն** | Հայերեն |
| **Կրեդիտները (ECTS)** | 7 |
| **Դասընթացի անցկացման կիսամյակը** | 2-րդ կիսամյակ |
| **Մուտքային պահանջներ** | Մուտքային պահանջներ չկան |
| **Դասընթացի նպատակը** | Ծանոթացնել քիմիա գիտության բոլոր ճյուղերի տեսական և կիրառական դրույթներին, որոնք օգտակար կլինեն մասնագիտական գործնեության շրջանակներում: Գիտելիք փոխանցել քիմիական տարրերի/նյութերի կենսաքիմիական հատկությունների, շրջակա միջավայրում դրանց դերի, նշանակության ու փոխարկումների վերաբերյալ, հիմնավորել քիմիական պրոցեսների դերը շրջակա միջավայրում և բույսերում ու կենդանիների օրգանիզմներում տեղի ունեցող տարբեր երևույթներում: |
| **Դասընթացի վերջնարդյունքներ** | **Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.**<br>1. Վերլուծել և բացահայտել քիմիական երևույթների ազդեցությունը շրջակա միջավայրում տեղի ունեցող կենսական նշանակության պրոցեսներում:<br>2. Իմանալ շրջակա միջավայրում քիմիական նյութերի ֆունկցիոնալ ազդեցության և դրանց քիմիական հատկությունների միջև փոխկապակցվածությունը:<br>3. Տեսական գիտելիքները կիրառել գործնական խնդիրների լուծման համար:<br>4. Ստացած գիտելիքները օգտագործել շրջակա միջավայրում ընթացող քիմիական պրոցեսները նկարագրելու համար: |
| **Դասավանդման և ուսումնառության մեթոդները** | **Դասավանդման մեթոդներ՝** դասախոսություն, սեմինարներ, դիդակտիկ նյութերի քննարկում, լաբորատոր և գործնական պարապմունքներ, փորձարարական աշխատանքներ<br><br>**Ուսումնառության մեթոդներ՝** գրականության օգտագործում, ինտերակտիվ դասախոսություն, լսարանային քննարկումներ, փորձարարական աշխատանքներ, մեթոդական ցուցումներ |
| **Գնահատման մեթոդներ** | Ուսանողների գիտելիքների գնահատման համար կիրառվում են մի քանի մոտեցումներ.<br>1) քննարկում-բանավեճ, ինչը հնարավորություն է տալիս ուսանողին անկաշկանդ դրսևորել իր գիտելիքները, |

| | |
|---|---|
| | 2) լաբորատոր դասերին փորձը կատարելուց առաջ ուսանողը վերլուծում է առաջադրանքը, իսկ փորձի ավարտին ներկայացնում եզրահանգումները,<br>3) ուսանողների գիտելիքների ստուգման տարբերակներից է դասի ընթացքում առաջարկվող վարժությունների ու խնդիրների լուծումը: Իրականացվում են բանավոր հարցումներ, գրավոր աշխատանքներ, ինքնուրույն աշխատանքներ, թեստային առաջադրանքներ: |
| **Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ** | |
| **Մասնագիտական կրթական ծրագիրը** | Ագրոէկոլոգիա |
| **Դասընթացի ծածկագիրը** | |
| **Դասընթացի անվանումը** | Կենսագործունեության անվտանգություն և քաղպաշտպանություն |
| **Դասընթացի տեսակը** | Պարտադիր |
| **Դասավանդման լեզուն** | Հայերեն |
| **Կրեդիտները (ECTS)** | 4 |
| **Դասընթացի անցկացման կիսամյակը** | 3-րդ կիսամյակ |
| **Մուտքային պահանջներ** | Մուտքային պահանջներ չկան |
| **Դասընթացի նպատակը** | Ուսանողներին ծանոթացնել արտադրական անվտանգության և քաղաքացիական պաշտպանության բնագավառին վերաբերվող օրենսդրական և իրավական նորմերին ու դրույթներին, արտադրական վնասվածության և մասնագիտական հիվանդությունների նվազեցմանն ու կանխմանն ուղղված տեխնիկական, տեխնոլոգիական, կազմակերպչական, սանիտարահիգիենիկ և հակահրդեհային միջոցառումներին, օգտագործվող տեխնիկական միջոցների անվտանգ շահագործման, միջուկային և քիմիական զենքից ու հակառակորդի հարձակման այլ ժամանակակից միջոցներից, տարերային և տեխնածին աղետներից բնակչության պաշտպանության կազմակերպման հարցերին, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում գյուղատնտեսական արտադրության վարման առանձնահատկություններին: |
| **Դասընթացի վերջնարդյունքներ** | **Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.**<br>1. Ներկայացնել արտադրական վնասվածքների տեսակները, վնասվածության հիմնական պատճառները, զանգվածային ոչնչացման միջոցների, տարերային և տեխնածին աղետների տեսակներն ու բնութագրերը:<br>2. Ընտրել արտադրական դժբախտ դեպքերի, մասնագիտական հիվանդությունների նվազեցման ու կանխման, արտակարգ իրավիճակներում պաշտպանության կազմակերպման արդյունավետ եղականակները, |

| | |
|---|---|
| | օգտագործվող տեխնիկական և անհատական ու կոլեկտիվ պաշտպանության միջոցների տեսակները:<br>3. Վերլուծել իրականացվող տեխնոլոգիական գործընթացնե-րի անվտանգության աստիճանը, ստեղծված ռադիացիոն և քիմիական իրադրությունները:<br>4. Առաջարկել տեխնոլոգիական գործընթացներում օգտա-գործվող մեքենաասարքավորումների շահագործման անվտանգության, էլեկտրաանվտանգության, ամպրոպա-պաշտպանության, հրդեհային անվտանգության մակար-դակի բարձրացման արդյունավետ տեխնիկական ու կազ-մակերպչական միջոցառումներ:<br>5. Գնահատել ագրոարդյունաբերական ոլորտում իրակա-նացվող տեխնոլոգիական գործընթացների ռիսկերը:<br>6. Կատարել չափումներ աշխատատեղերում միկրոկլիմայա-կան պարամետրերի որոշման, ռադիացիոն և քիմիական հետախուզության սարքերի միջոցով: |
| **Դասավանդման և ուսումնառության մեթոդները** | **Դասավանդման մեթոդները՝** տեսական և գործնական պարապմունքներ, ցուցադրական նյութի էլեկտրոնային ներկայացում և ինքնուրույն աշխատանք<br><br>**Ուսումնառության մեթոդները՝** ուսումնամեթոդական գրականության օգտագործում, էլեկտրոնային հարթակի կիրառում, ռեֆերատների և ինքնուրույն աշխատանքների պատրաստում և ներկայացում |
| **Գնահատման մեթոդներ** | Գրավոր (միջանկյալ և ամփոփիչ քննություններ), բանավոր (ինքնուրույն աշխատանքի ներկայացում), թեստեր (գործնական պարապմունքներ, ընթացիկ ստուգումներ) |
| **Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ** | |
| **Մասնագիտական կրթական ծրագիրը** | Ագրոէկոլոգիա |
| **Դասընթացի ծածկագիրը** | |
| **Դասընթացի անվանումը** | Բույսերի գենետիկա |
| **Դասընթացի տեսակը** | Պարտադիր |
| **Դասավանդման լեզուն** | Հայերեն |
| **Կրեդիտները (ECTS)** | 5 |
| **Դասընթացի անցկացման կիսամյակը** | 3-րդ կիսամյակ |
| **Մուտքային պահանջներ** | Դասընթացը տրամաբանորեն փոխկապակցված է «Բուսաբանություն» առարկայի հետ: |
| **Դասընթացի նպատակը** | Ուսանողի մոտ ձևավորել կենսաբանական համակարգերի մոլեկուլյար, բջջային, օրգանիզմային, պոպուլյացիոն մակար-դակի վրա ժառանգական տեղեկատվության պահպանման, փոխանցման և իրագործման գործընթացների գիտական |

| | |
|---|---|
| | աշխարհայացքը, ուսանողներին ծանոթացնել ժամանակակից գենետիկայի հիմնական խնդիրներին, հետազոտման մեթոդներին, հատկանիշների ժառանգման բնույթին, ձևավորել պատկերացում բուսական օրգանիզմների սերունդների վերարտադրման բազմազան եղանակներին, մեթոդներին, ձևավորել գյուղատնտեսական մշակաբույսերի քանակական և որակական հատկանիշների ժառանգման բնույթի, դրանց դրսևորումների վերաբերյալ գիտելիքներ: |
| **Դասընթացի վերջնարդյունքներ** | **Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.**<br>1. Ներկայացնել ժառանգականության բջջաբանական, մոլեկուլյար հիմունքները, ժառանգականության քրոմոսոմային տեսությունը, բջջային և գենային ինժեներիաի հիմունքները, գենետիկորեն մոդիֆիկացված գյուղատնտեսական մշակաբույսերը:<br>2. Կատարել հիբրիդոլոգիական վերլուծություն գյուղատնտեսական պրակտիկայում:<br>3. Կիրառել ժամանակակից գենետիկայի հիմնարար գիտելիքները գյուղատնտեսական տարբեր ոլորտներում, նաև այլ մասնագիտությունների ուսումնասիրությունների ժամանակ:<br>4. Իրականացնել գենետիկական հետազոտություններ:<br>5. Կատարել մշակաբույսերի գենոտիպավորում ըստ պոլիմորֆ սպիտակուցների մի շարք լոկուսների |
| **Դասավանդման և ուսումնառության մեթոդները** | **Դասավանդման մեթոդներ**՝ նյութի բացատրություն, որի ժամանակ կիրառվում են պասիվ, ակտիվ և ինտերակտիվ մեթոդներ, տեսական թեմաների մեկնաբանում, ինքնուրույն աշխատանքի կատարում<br><br>**Ուսումնառության մեթոդները**՝ էլեկտրոնային սարքերի, աղյուսակների, ինտերակտիվ գործիքների կիրառում, բացատրական-ցուցադրական մեթոդի կիրառում, խմբային կամ անհատական մտագրոհ, քննարկումներ, տեսաֆիլմերի դիտում և քննարկում, ինքնուրույն կամ թիմային աշխատանքների կատարում |
| **Գնահատման մեթոդներ** | Ինքնուրույն աշխատանքի ներկայացում, միջանկյալ և ամփոփիչ քննություններ, թեստեր |
| **Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ** | |
| **Մասնագիտական կրթական ծրագիրը** | Ագրոէկոլոգիա |
| **Դասընթացի ծածկագիրը** | |
| **Դասընթացի անվանումը** | Բույսերի ֆիզիոլոգիա |
| **Դասընթացի տեսակը** | Պարտադիր |
| **Դասավանդման լեզուն** | Հայերեն |

| | |
|---|---|
| **Կրեդիտները (ECTS)** | 4 |
| **Դասընթացի անցկացման կիսամյակը** | 3-րդ կիսամյակ |
| **Մուտքային պահանջներ** | Դասընթացը տրամաբանորեն փոխկապակցված է «Ֆիզիկա կենսաֆիզիկայի հիմունքներով» առարկայի հետ: |
| **Դասընթացի նպատակը** | Ուսումնասիրել բույսերի ֆիզիոլոգիայի հիմունքները, ուսանողների մոտ ձևավորել գիտական մոտեցում բույսերի օրգանիզմում տեղի ունեցող ֆիզիոլոգիական գործընթացներին, դրանց փոխկապվածության և կարգավորման մեխանիզմների, նաև շրջակա միջավայրի հետ փոխկապվածութան հիմնական օրինաչափությունների վերաբերյալ: |
| **Դասընթացի վերջնարդյունքներ** | **Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.**<br>1. Ճանաչել բույսերի ֆիզիոլոգիայի ժամանակակից խնդիրները և դրանց լուծման հիմնական ուղիները:<br>2. Իմանալ բուսական բջջի ֆիզիոլոգիական առանձնահատկությունները և ֆիզիոլոգիական գործընթացների մոլեկուլյար հիմունքները:<br>3. Տիրապետել բույսերի ֆիզիոլոգիայի գործընթացների հիմնական օրենքներին և մեխանիզմներին:<br>4. Իմանալ արտաքին միջավայրի գործոնների ազդեցության բնույթը բույսի հիմնական կենսական գործընթացների վրա:<br>5. Տիրապետել որոշակի հմտությունների լաբորատոր փորձեր կատարելու համար:<br>6. Կիրառել տեսական և գործնական գիտելիքները գյուղատնտեսական պրակտիկայում:<br>6. Տեսական գիտելիքների հիման վրա կատարել որոշակի եզրակացություններ և հետևություններ:<br>7. Ձևավորել թիմային աշխատանք կատարելու, բույսերի ֆիզիոլոգիայի հանգուցային գաղափարները մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու հմտություններ: |
| **Դասընթացի վերջնարդյունքներ** | **Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.**<br>1. Ներկայացնել աբիոտիկ, բիոտիկ և անթրոպոգեն գործոնները ուսումնասիրվող համայնքներում:<br>2. Ճանաչել էկոհամակարգերի ֆունկցիոնալ առանձնահատկությունները տեղային մակարդակով:<br>3. Վերլուծել համայնքի էկոլոգիական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները:<br>4. Պարզել անթրոպոգեն ազդեցության դերը էկոհամակարգի վրա ուսումնասիրվող համայնքի օրինակով:<br>5. Գնահատել ագրոէկոլոգիական վերափոխումների հնարավորությունները համայնքներում: |
| **Դասավանդման և ուսումնառության մեթոդները** | **Դասավանդման մեթոդներ**՝ դասախոսություններ, տեսական նյութի ներկայացում, համակարգչային ցուցադրություն Power Point տարբերակով, թեմատիկ քննարկումներ, «ֆորմատիվ հարցումներ», գործնական պարապմունքներ<br><br>**Ուսումնառության մեթոդներ**՝ դասախոսությունների ունկնդրում, մասնակցություն գործնական աշխատանքների, ուսումնամեթոդական գրականության ուսումնասիրում, ինքնուրույն աշխատանքների կատարում |
| **Գնահատման մեթոդներ** | Ինքնուրույն աշխատանքի ներկայացում, միջանկյալ և ամփոփիչ քննություններ, թեստեր |
| **Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ** | |
| **Մասնագիտական կրթական ծրագիրը** | Ագրոէկոլոգիա |
| **Դասընթացի ծածկագիրը** | |
| **Դասընթացի անվանումը** | Բնապահպանական գլոբալ մարտահրավերներ |
| **Դասընթացի տեսակը** | Կամընտրային |
| **Դասավանդման լեզուն** | Հայերեն |
| **Կրեդիտները (ECTS)** | 4 |
| **Դասընթացի անցկացման կիսամյակը** | 8-րդ կիսամյակ |

| | |
|---|---|
| **Մուտքային պահանջներ** | Դասընթացը տրամաբանորեն փոխկապակցված է «Ագրոէկոլոգիա և շրջակա միջավայրի պահպանություն», «Էկոլոգիայի հիմունքներ», «Ագրոլանդշաֆտագիտություն» «Բնօգտագործում և էկոլոգիական դեգրադացիա», «Կենսաբազմազանության պահպանության էկոլոգիական հիմնախնդիրները», «Շրջակա միջավայրի մոնիտորինգ», «Կայուն գյուղատնտեսության պրակտիկ փորձը» առարկաների հետ: |
| **Դասընթացի նպատակը** | Գիտելիքներ հաղորդել գլոբալ էկոլոգիական արդի խնդիրների ուսումնասիրման, դրանց դրսևորման առանձնահատկություն-ների և հիմնական մոտեցումների վերաբերյալ գլոբալ, տարածաշրջանային և տեղային մակարդակներում: |
| **Դասընթացի վերջնարդյունքներ** | **Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.**<br>1. Ներկայացնել ժամանակակից գլոբալ էկոլոգիական հիմնախդիրները:<br>2. Ճանաչել գլոբալ էկոլոգիական հիմնախնդիրների առաջացման և զարգացման սոցիալ-տնտեսական և բնական նախադրյալները:<br>3. Մեկնաբանել գլոբալ էկոլոգիական խնդիրների դրսևոր-ման սոցիալ-էկոլոգիական, քաղաքական և այլ հետևանք-ները գլոբալ և տարածաշրջանային մակարդակներում:<br>4. Վերլուծել գլոբալ էկոլոգիական հիմնախնդիրների վերաբերյալ հավաքագրված տեղեկատվությունը:<br>5. Գնահատել գլոբալ էկոլոգիական հիմնախնդիրների կառավարման մեխանիզմները գլոբալ, տարածա-շրջանային և տեղային մակարդակներում:<br>6. Ձևակերպել գլոբալ էկոլոգիական հիմնախնդիրների դրսևորման ազդեցությունները և հետևանքները ՀՀ տարածքում: |
| **Դասավանդման և ուսումնառության մեթոդները** | **Դասավանդման մեթոդներ**՝ դասախոսություններ, տեսական նյութի ներկայացում և բացատրություն, համակարգչային ցուցադրություն Power Point տարբերակով, թեմատիկ քննարկումներ, «ֆորմատիվ հարցումներ», գործնական պարապմունքներ<br><br>**Ուսումնառության մեթոդներ**՝ դասախոսությունների ունկնդրում, մասնակցություն գործնական աշխատանքների, ուսումնամեթոդական գրականության ուսումնասիրում, ինքնուրույն աշխատանքների կատարում |
| **Գնահատման մեթոդներ** | Ինքնուրույն աշխատանքի ներկայացում, միջանկյալ և ամփոփիչ քննություններ, թեստեր |

## 7. Դասավանդման և ուսումնառության մեթոդները

ՄԿԾ-ի համար ուսուցման առաջնային մեթոդը դասախոսություններն են, որոնք դասավանդում են ոլորտի ճանաչված, հանրապետությունում գիտահետազոտական և կիրառական ծրագրեր իրականացնող մասնագետներ: Դասընթացները կազմակերպվում են Moodle առցանց ուսուցման հարթակի օգնությամբ: Այն մասնագիտական գրականությունից բացի դասախոսներին հնարավորություն է տալիս լրացուցիչ նյութեր, դասախոսություններ կամ հոդվածներ տրամադրել ուսանողներին և միշտ տեղեկացնել նրանց կատարողականի մասին: Բացի դասախոսություններից՝ կան նաև լաբորատոր և գործնական աշխատանքներ: Ուսանողները նաև ուսումնառում են լսարանային քննարկումների, խմբային աշխատանքի և շնորհանդեսների պատրաստման միջոցով:
Բացի հիմնական դասընթացի նյութից՝ որոշ առարկաներ կարող են հարստացվել հրավիրյալ դասախոսների տրամադրած նյութերով:

Սույն կրթական ծրագրի շրջանակներում կիրառվում են դասավանդման հետևյալ մեթոդները.

- **«Իմացության պարզաբանում»** - յուրաքանչյուր թեմայի դասավանդումից առաջ կատարվում են հարցումներ թեմայի վերաբերյալ՝ ուսանողների իմացության մակարդակը պարզաբանելու նպատակով:
- **«Տեսական նյութի ներկայացում և բացատրություն»** - դասախոսը մանրամասն ներկայացնում է նյութը՝ կիրառելով նաև համակարգչային ցուցադրություն power point տարբերակով, պաստառներ:
- **«Ֆորմատիվ հարցումներ»** - նյութի ներկայացման ընթացքում պարբերաբար կատարվում են հարցումներ նյութի ընկալման մակարդակը պարզելու համար:
- **«Իմացության համառոտ ներկայացում»** - յուրաքանչյուր թեմա ավարտելուց հետո դասախոսը հանձնարարում է այն ձևակերպել մեկ նախադասությամբ՝ թեմայի յուրացման աստիճանը պարզելու համար:
- **«Հարց ու պատասխան»** - դասի ավարտին ուսանողները դասախոսին հարցեր են տալիս տվյալ թեմայի վերաբերյալ:

Լաբորատոր-գործնական պարապմունքների անցկացման համար առկա են համապատասխան ցուցադրական նյութեր, առանձին առարկաների մասով լաբորատոր սարքավորումներ:
Ուսանողը հնարավորություն է ստանում մասնակցել գիտաժողովների և ներգրավվել հետազոտական աշխատանքներին:

***Որպես ուսումնառության մեթոդներ կիրառվում են՝***

- ուսումնամեթոդական և էլեկտրոնային գրականության ուսումնասիրություն,
- ինքնուրույն, անհատական կամ խմբակային աշխատանքների կատարում,
- լաբորատոր փորձերի և գործնական աշխատանքների կատարում,
- մասնակցություն պրակտիկաների և հաշվետվությունների պատրաստում,
- թեմատիկ ռեֆերատների պատրաստում և ներկայացում:

## 8. Գնահատման մեթոդները

ՄԿԾ շրջանակում մշտապես գնահատվում են ուսանողների ուսուցման արդյունքները և որոնվում են գնահատման նոր գործիքներ:
Ուսանողների գիտելիքների և կարողությունների մակարդակը ստուգվում է ընթացիկ և վերջնական ստուգումներով: Ընթացիկ ստուգումներն իրականացվում են լսարանում՝ պարբերաբար հարցումների միջոցով, ինքնուրույն աշխատանքների գնահատմամբ ու միջանկյալ քննությունների արդյունքներով: Վերջնական ատեստավորումն իրականացվում է բանավոր ստուգարքի, գրավոր քննության ու բանավոր հարցումների արդյունքներով կամ թեստային եղանակով: Ընդհանուր առմամբ կիրառվում են գնահատման բազմագործոնային մեթոդներ:
Վերջնական գնահատականը ձևավորվում է բազմագործոնային համակարգով՝ ըստ

ամբիոններում հաստատված չափորոշիչների.

- ամփոփիչ և վերջնական ստուգումներն անցկացվում են թեստավորմամբ, գրավոր և բանավոր հարցումներով,
- բանավոր մեթոդը կիրառվում է ինքնուրույն աշխատանքների, ընթացիկ և ամփոփիչ գիտելիքների գնահատման ժամանակ:

**Ուղղակի մեթոդներ**

***Մասնակցություն/ակտիվություն:*** Դասախոսը կարող է կանոնավոր կերպով հարցեր ուղղել ուսանողներին լսարանում: Յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար ուսանողները ստանում են միավորներ, որոնք կարող են հաշվի առնվել ուսանողի ամփոփիչ գնահատման ժամանակ:

***Հաճախում:*** Ուսանողները պետք է պատշաճ կերպով հաճախեն դասերին (ներկա լինել դասի ամբողջ ընթացքում): Բացակայությունը համարվում է հարգելի, եթե ուսանողը ներկայացրել է բժշկի տեղեկանք կամ ունի դեկանատի նախնական հաստատումը: Ուսանողները պատասխանատվություն են կրում լսարանում կատարված առաջադրանքների և ուսումնառության նյութի համար՝ նույնիսկ հարգելի բացակայության դեպքում: Դասախոսը e-buh համակարգում մուտքագրում է ուսանողի բացակայությունը, սակայն դեկանատը հարկ եղած դեպքում կարող է անվավեր ճանաչել այն:

***Խմբային աշխատանքներ:*** Սահմանվում են համապատասխան դասընթացների ծրագրերով:

***Անհատական կամ ինքնուրույն աշխատանքներ (լսարանում):*** Նշվում են համապատասխան դասընթացների ծրագրերով: Ուսանողներն անհատական առաջադրանքներ և հանձնարարականներ ունեն բոլոր այն առարկաներից, որտեղ արտացոլվում են մասնագիտական վերջնարդյունքների ձեռք բերման հնարավորություններ: Ինքնուրույն աշխատանքի թեմաները ուսանողն ընտրում է իր ցանկությամբ:

***Բանավոր շնորհանդեսներ:*** Ուսանողները ներկայացնում են խմբային նախագծեր և (կամ) անհատական աշխատանքներ տարբեր պարբերականությամբ՝ հիմնական, անհատական և խմբային: Գնահատումը կատարվում է ըստ շնորհանդեսի գնահատման ռուբրիկի:

***Միջանկյալ/եզրափակիչ քննություններ:*** Ավարտական քննությունները համապարփակ են: Գրեթե բոլոր դասընթացների համար միջանկյալ և ամփոփիչ քննությունները օգտագործվում են որպես ուսանողների կատարողականը և պահանջվող հմտությունների և գիտելիքների ձևավորումը նշելու միջոց:

***Բաց դասեր:*** Որպես կանոն, կազմակերպվում են ոլորտի առաջատար տնտեսություններում կամ արտադրությունից հրավիրված մասնագետների ներգրավմամբ:

Վերջնական գնահատականը հաշվարկելիս օգտագործում են յուրաքանչյուր նախանշված գործոնի կշռված համամասնությունները:

Փոխակերպման սանդղակով տրամադրված գնահատականները օգտագործվում են ակադեմիական դասընթացների կատարողականի մակարդակը որոշելու համար: Դասընթացի գնահատումը կատարվում է հետևյալ սանդղակի համաձայն՝ ECTS գնահատման համակարգի հիման վրա.

| Ռեյտինգային միավորները | Գնահատման սանդղակ | | Համապատասխան տառային և թվային գնահատականն ըստ ECTS-ի | |
|---|---|---|---|---|
| | 5 | 20 | տառային | թվային |
| 96-100 | 5 | 20 | A+ | 4.0 |
| 89-95 | | 19 | A | |
| 84-88 | | 18 | A- | 3.7 |
| 79-83 | 4 | 17 | B+ | 3.3 |
| 72-78 | | 15-16 | B | 3.0 |
| 67-71 | | 14 | B- | 2.7 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **62-66** | **3** | **13** | **C+** | **2.3** |
| **55-61** | | **11-12** | **C** | **2.0** |
| **50-54** | | **10** | **C-** | **1.7** |
| **< 50** | **2** | **անբավարար** | **D** | **0** |
| **0** | | **չներկայացած** | **F (Failure for Non-Attendance)** | **0** |
| **≥ 50** | | **ստուգված** | **S (satisfactory)** | **-** |
| **< 50** | | **չստուգված** | **U (unsatisfactory)** | **-** |

***Պրակտիկայի հաշվետվություններ:*** Համալսարանում ներդրված է DUAL կրթական համակարգը, հետևաբար արտադրական փորձ և հմտություններ ձեռք բերելու նպատակով ուսանողներին հնարավորություն է տրվում աշխատանքային կիսամյակն անցնել ոլորտի առաջատար (գյուղատնտեսական և բնապահպանական ուղղվածության) տնտեսություններում և կազմակերպություններում: Նրանք սովորաբար ոչ միայն ծանոթանում են ընկերության գործունեությանը, այլև աշխատում են համապատասխան աշխատակիցների հետ: Պրակտիկայի ավարտին ուսանողները պետք է ներկայացնեն վերջնական հաշվետվություն, որն արտացոլում է ընկերության գործունեությունը, ուսանողի դերն աշխատավայրում, ինչպես նաև առաջարկություններ ընկերության հետագա զարգացման համար:
Պրակտիկայի հաշվետվությունը գնահատվում է ըստ երեք հիմնական բաղադրիչների՝ հաշվետվության բովանդակություն, արտադրությունից պրակտիկայի ղեկավարի գնահատական, բանավոր պատասխան:
Գնահատումն իրականացվում է սանդղակների միջոցով.

- ✓ Գնահատական արտադրության ղեկավարի կողմից 70 % (հավելված 5)
- ✓ Գրավոր հաշվետվություն 10 %
- ✓ Բանավոր պատասխան 20 %

Աշխատանքային կիսամյակի ընթացքում (երկու անգամ) համալսարանի ՈԳԱ կենտրոնի միջոցով կատարվում են ուսանողների և գործատուների առցանց հարցումներ, որոնց արդյունքները քննարկվում են դեկանատի աշխատակիցների, պրակտիկայի պատասխանատուի և համակարգող ամբիոնների վարիչների հետ՝ առկա խնդիրները գնահատելու, վերհանելու և մշտադիտարկելու նպատակով:
***Ավարտական աշխատանք:*** Մասնագիտական ամբիոնների կողմից՝ ուսանողների հետ համաձայնեցված, ներկայացվում և հրամանագրվում են բակալավրական ավարտական՝ դիպլոմային աշխատանքների թեմաները, որոնց կատարման համար ուսանողները կիրառում են ուսումնական պլանով նախատեսված առարկաներից ստացված գիտելիքներն ու հմտությունները, առաջնորդվելով ղեկավարի ուղղորդումներով: Ուսումնառության ավարտական կիսամյակում ուսանողները ներկայացնում են ավարտական աշխատանքների հաստատված թեմաներին համապատասխան ավարտուն աշխատանքներ (դիպլոմային աշխատանքներ), որոնց հրապարակային պաշտպանությունը ֆակուլտետում ձևավորված հանձնաժողովի պայմաններում, իրականացվում է բանավոր ներկայացմամբ՝ շնորհանդեսի միջոցով: Աշխատանքը գնահատվում է պետական ատեստավորման հանձնաժողովի անդամների կողմից նշանակված գնահատականների միջին թվաբանականի հաշվարկով: Ուսանողը իրավունք ունի տվյալ պահին բողոքարկել ստացած վերջնական գնահատականը:

| 9. Կրթական ծրագրի շրջանակներում իրականացվող պրակտիկա |
| --- |
| Աշխատանքային կիսամյակը նախատեսված է ուսումնական պլանով ուսումնառության 6-րդ և 7-րդ կիսամյակներում:<br>Պրակտիկաները կազմակերպվում են ՀՀ գյուղատնտեսության և բնապահպանության ոլորտի առաջատար կազմակերպություններում և տնտեսություններում՝ ՀՀ ՇՄՆ վարչություններ, ՀՀ տարբեր մարզպետարանների գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչություններ, ՀՀ ՇՄՆ «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ, «Նաիրիան» ՓԲԸ, «Կանաչ արահետ» ՀԿ, ՀՀ ՇՄՆ Անտառային կոմիտե և Հայանտառ ՊՈԱԿ-ի համապատասխան մասնաճյուղեր, ArLeAm ՍՊԸ, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, «Մասիս Տոբակո» ՍՊԸ Հաղթանակի մասնաճյուղ (Տավուշի մարզ), «Էկոգլոբ» ՍՊԸ, «Պրոֆալ» ՍՊԸ, «ՕՌՎԱԿՕ» ՓԲԸ, Ոսկեհատ ՈՒՓՏ, «Արզնի տոհմային ԹՏԽ» ԲԲԸ, «Սևան ազգային պարկ», Երևանի քաղաքապետարանի «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ, «Խոսրովի անտառ» պետական արգելոց ՊՈԱԿ, առաջատար ֆերմերային տնտեսություններ և այլ կառույցներ: |
| **10. Մասնագիտական գործունեության ոլորտը և ապագա կարիերայի հնարավորությունները** |
| Ավարտելուց հետո շրջանավարտը կարող է ագրարային արտադրության ոլորտում աշխատել որպես՝<br>• Ագրարային ոլորտի արտադրության էկոլոգ/ագրոէկոլոգ<br>• Գյուղատնտեսական ձեռնարկատեր և (կամ) կառավարիչ<br>• Գիտական հետազոտական աշխատանքներ իրականացնող<br>• Գյուղատնտեսության և բնապահպանության ոլորտի փորձագետ/խորհրդատու<br>• Բնապահպանական խնդիրների լուծման համակարգող և իրականացնող<br>• Կայուն գյուղատնտեսության զարգացման քաղաքականություն մշակող |
| **11. ՄԿԾ իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներ** |
| ՄԿԾ-ի իրականացման համար ֆակուլտետում (Համալսարանում) առկա են հետևյալ ռեսուրսները՝<br>• Անտառագիտության և ագրոէկոլոգիայի լաբորատորիա<br>• «Ոսկեհատ» ուսումնափորձնական տնտեսություն<br>• «Ակունք» փորձացուցադրական տնտեսություն<br>• Օրգանական գյուղատնտեսության լաբորատորիա<br>• «Ընդհանուր քիմիայի» լաբորատորիա<br>• Ուսումնափորձարարական ջերմատուն<br>• Սեմինարների, բաց դասերի համար նախատեսված AgriTech ինկուբատոր սենյակ<br>• Ընթերցասրահներ՝ հագեցած անհրաժեշտ ռեսուրսներով<br>**Նախապատրաստվում են՝**<br>• Կլիմայի հարմարվողականության և կայունության լաբորատորիա<br>**Անհրաժեշտ է՝**<br>• Համակարգչային ռեսուրսներով հագեցած լսարաններ<br>• Անհրաժեշտ սարքերով, գործիքներով, նյութերով և պարագաներով հագեցած լաբորատորիա մասնագիտական առարկաների սպասարկման համար |

| 12. ՄԿԾ իրականացման համար պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմին ներկայացվող պահանջներ | |
|---|---|
| Հիմնական պրոֆեսորադասախոսական կազմը հանդիսանում է յուրաքանչյուր ՄԿԾ-ի կատարման արդյունավետության բաղադրիչ, որի պրոֆեսիոնալ որակից են կախված շրջանավարտների ուսումնառության ընթացքում ձևավորված վերջնարդյունքները: Որակի ապահովման նպատակով պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության համար սահմանվում են մի շարք պահանջներ.<br>ա) ՄԿԾ սպասարկող պրոֆեսորադասախոսական կազմի առնվազն 50 տոկոսի համար տվյալ ուսումնական հաստատությունը պետք է հանդիսանա հիմնական աշխատավայր,<br>բ) ՄԿԾ սպասարկող պրոֆեսորադասախոսական կազմի դասախոսների առնվազն 50 տոկոսը պետք է ունենա պետական լիազորված մարմնի կողմից ճանաչված գիտական աստիճան և (կամ) կոչում,<br>գ) բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի իրականացումը պետք է ապահովվի գիտամանկավարժական կադրերով, ովքեր ունեն դասավանդվող դասընթացի ուղղվածությանը համապատասխանող բազային կրթություն՝ առնվազն դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորման աստիճանով, նույն կրթական ծրագրի մասնագիտական դասընթացների վարման համար, ինչպես նաև պետք է ներգրավված լինեն գիտական աստիճան և (կամ) գիտական կոչում կամ համապատասխան գործունեության ոլորտում մասնագիտական աշխատանքի փորձ և/կամ պարբերաբար վերապատրաստումներ ունեցող կադրեր:<br>Պրոֆեսորադասախոսական անձնակազմը պարբերաբար անցնում է վերապատրաստումներ գյուղատնտեսության և բնապահպանության ոլորտների առաջատար կազմակերպություններում և տնտեսություններում, հետազոտական լաբորատորիաներում, գերատեսչական մարմիններում, կրթության բարելավմանն ուղղված տարբեր կառույցներում: | |
| **ՄԿԾ պատասխանատու/-ներ** | **Մարինե Մարկոսյան, Սամվել Թամոյան, Հրանտ Խաչատրյան, Էլմիրա Զաքարյան** |
| **Ֆակուլտետի դեկան** | **Արմենակ Տեր-Գրիգորյան** |
| **Ամբիոնի վարիչ** | **Մարինե Մարկոսյան** |

Հավելված 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀԱԱՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ
<<___>> __________________2024թ.
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №____

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԱՎԵՐԱՑՆՈՒՄ ԵՄ
ՌԵԿՏՈՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ Հ. ՋԱՔՈՅԱՆ
<<___>> __________________2024թ.
Ներդրվում է 2024-2025 ուս. տարվանից

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

(բակալավրային կրթության, առկա ուսուցում)
Մասնագիտությունը՝ 052201.00.6 – Բնապահպանություն և բնօգտագործում
Կրթական ծրագիրը՝ 052201.02.6 - Ագրոէկոլոգիա
Որակավորման անվանումը՝ Շրջակա միջավայրի բակալավր
Ուսուցման նորմատիվային ժամկետը՝ 4 տարի
Կրեդիտների թիվը՝ 240

## I ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՐԱՖԻԿ

| Կուրս | սեպտեմբեր | | | | հոկտեմբեր | | | | նոյեմբեր | | | | | դեկտեմբեր | | | | հունվար | | | | | փետրվար | | | | մարտ | | | | ապրիլ | | | | մայիս | | | | | հունիս | | | | հուլիս | | | | օգոստոս | | | | | Տես. ուսուց. | Քն. սեսիա | Արտ. պրակտ. | Դիպլոմային աշխ. | Արձակուրդ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ՇԱԲԱԹՆԵՐ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | 32 | 33 | 34 | 35 | 36 | 37 | 38 | 39 | 40 | 41 | 42 | 43 | 44 | 45 | 46 | 47 | 48 | 49 | 50 | 51 | 52 | | | | | | |
| I | 16 | | | | | | | | = | | | | | | | | | = | :: | :: | :: | = | 16 | | | | | | | | = | | | | | | | | | :: | :: | :: | = | = | = | = | = | = | = | = | = | = | 32 | 6 | - | - | 14 | 52 |
| II | 16 | | | | | | | | = | | | | | | | | | = | :: | :: | :: | = | 16 | | | | | | | | = | | | | | | | | | :: | :: | :: | = | = | = | = | = | = | = | = | = | = | 32 | 6 | - | - | 14 | 52 |
| III | 16 | | | | | | | | = | | | | | | | | | = | :: | :: | :: | = | 8 | | | | | | | | = | :: | :: | :: | x | x | x | x | x | x | x | x | = | = | = | = | = | = | = | = | = | = | 24 | 6 | 8 | - | 14 | 52 |
| IV | x | x | x | x | x | x | x | x | = | 8 | | | | | | | | = | :: | :: | :: | = | 10 | | | | | | | | | | :: | :: | :: | II | II | II | II | | | | | | | | | | | | | | 18 | 6 | 8 | 4 | 3 | 39 |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | 106 | 24 | 16 | 4 | 45 | 195 |

| Նշան | Նշանակություն |
|---|---|
| (դատարկ) | Տեսական ուսուցում |
| :: | Քննաշրջան |
| x | Արտադր. պրակտ. |
| = | Արձակուրդ |
| II | Դիպլոմային աշխատանք |

| II Ուսումնական գործընթացի պլան | | | | | |
|---|---|---|---|---|---|
| հ/հ | Առարկայի անվանումը | Կրեդիտների թիվ | Շաբաթական ժամաքանակ | Ընդհանուր լսարանային ժամաքանակ | անհատական և ինքնուրույն աշխատանք |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| ***1-ին կիսամյակ, 16 շաբաթ*** | | | | | |
| 1 | Բուսաբանություն | 8 | 8 | 128 | 112 |
| 2 | Հայոց լեզու | 2 | 2 | 32 | 28 |
| 3 | Հայոց պատմություն | 2 | 2 | 32 | 28 |
| 4 | Օտար լեզու (ռուսաց լեզու) | 4 | 4 | 64 | 56 |
| 5 | Բարձրագույն մաթեմատիկա | 6 | 6 | 96 | 84 |
| 6 | Կիրառական ինֆորմատիկա | 6 | 6 | 96 | 84 |
| 7 | Ֆիզիկական կուլտուրա – 1* | | 2 | 32 | |
| | ***Ընդամենը 1-ին կիսամյակում*** | **28** | **30** | **480** | **392** |
| ***2-րդ կիսամյակ, 16 շաբաթ*** | | | | | |
| 1 | Գյուղատնտեսության էկոնոմիկա | 3 | 3 | 48 | 42 |
| 2 | Օտար լեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն) | 8 | 8 | 128 | 112 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3 | Հասարակագիտության մոդուլներ (Հայոց պատմություն, Մշակութաբանություն, Քաղաքագիտություն, Փիլիսոփայություն)** | 6 | 6 | 96 | 84 |
| 4 | Ֆիզիկա կենսաֆիզիկայի հիմունքներով | 5 | 5 | 80 | 70 |
| 5 | Հայոց լեզու և խոսքի մշակույթ | 2 | 2 | 32 | 28 |
| 6 | Ընդհանուր քիմիա | 7 | 7 | 112 | 98 |
| 7 | Ֆիզիկական կուլտուրա – 2* | | 2 | 32 | |
| | ***Ընդամենը 2-րդ կիսամյակում*** | **31** | **33** | **528** | **434** |
| | ***3-րդ կիսամյակ, 16 շաբաթ*** | | | | |
| 1 | Կենսագործունեության անվտանգություն և քաղպաշտպանություն*** | 4 | 4 | 64 | 56 |
| 2 | Բույսերի գենետիկա | 5 | 5 | 80 | 70 |
| 3 | Բույսերի ֆիզիոլոգիա կենսաքիմիայի հիմունքներով**** | 6 | 6 | 96 | 84 |
| 4 | Հողագիտություն | 5 | 5 | 80 | 70 |
| 5 | Մանրէակենսաբանություն***** | 6 | 6 | 96 | 84 |
| 6 | Ագրոէկոլոգիա և շրջակա միջավայրի պահպանություն | 4 | 4 | 64 | 56 |
| | ***Ընդամենը 3-րդ կիսամյակում*** | **30** | **30** | **480** | **420** |
| | ***4-րդ կիսամյակ, 16 շաբաթ*** | | | | |
| 1 | Վիճակագրություն բիոմետրիայի հիմունքներով | 4 | 4 | 64 | 56 |
| 2 | Ագրոքիմիա | 5 | 5 | 80 | 70 |
| 3 | Օրգանական գյուղատնտեսության հիմունքներ | 5 | 5 | 80 | 70 |
| 4 | Այգեպտղաբուծություն | 4 | 4 | 64 | 56 |
| 5 | Էնտոմոլոգիա | 5 | 5 | 80 | 70 |
| 6 | Ֆիտոպաթոլոգիա | 5 | 5 | 80 | 70 |
| | ***Ընդամենը 4-րդ կիսամյակում*** | **28** | **28** | **448** | **392** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ***5-րդ կիսամյակ, 16 շաբաթ*** | | | | | |
| 1 | Երկրագործություն | 3 | 3 | 48 | 42 |
| 2 | Բանջարաբուծություն | 3 | 3 | 48 | 42 |
| 3 | Բուսաբուծություն | 3 | 3 | 48 | 42 |
| 4 | Ագրոլանդշաֆտագիտություն | 5 | 5 | 80 | 70 |
| 5 | Էկոլոգիայի հիմունքներ | 5 | 5 | 80 | 70 |
| 6 | Շրջակա միջավայրի ազդեցության գնահատում (ՇՄԱԳ) և էկոլոգիական նորմավորում | 6 | 6 | 96 | 84 |
| 7 | Կամընտրային առարկա | | | | |
| | **Կամընտրային առարկաներ** | | | | |
| 7 | Անասնաբուծական և բուսաբուծական համակարգերի ազդեցությունները շրջակա միջավայրի վրա | 6 | 6 | 96 | 84 |
| | Սոցիալական էկոլոգիա | | | | |
| | Ջրային ռեսուրսներ և շրջակա միջավայր | | | | |
| | ***Ընդամենը 5-րդ կիսամյակում*** | **31** | **31** | **496** | **434** |
| ***6-րդ կիսամյակ, 8 շաբաթ տեսական ուսուցում, 8 շաբաթ պրակտիկա*** | | | | | |
| 1 | Կենսաբազմազանության պահպանության էկոլոգիական հիմնախնդիրներ | 3 | 6 | 48 | 42 |
| 2 | Բնօգտագործում և էկոլոգիական ռեգրառագիա | 3 | 6 | 48 | 42 |
| 3 | Ագրոէկոտուրիզմ | 3 | 6 | 48 | 42 |
| 4 | Կամընտրային առարկա | | | | |
| | **Կամընտրային առարկաներ** | | | | |
| 4 | Էկոհամակարգային ծառայություններ | 5 | 10 | 80 | 70 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Թվային տեխնոլոգիաները գյուղատնտեսական համակարգերում | | | | |
| | Նորարարական և վերականգնվող էներգիայի աղբյուրներ | | | | |
| 5 | **Արտադրական պրակտիկա - 8 շաբաթ** | **15** | | | |
| | ***Ընդամենը 6-րդ կիսամյակում*** | **29** | **28** | **224** | **196** |
| ***7-րդ կիսամյակ, 8 շաբաթ պրակտիկա, 8 շաբաթ տեսական ուսուցում*** | | | | | |
| 1 | Մարգագետնաբուծություն կերարտադրության հիմունքներով | 2 | 4 | 32 | 28 |
| 2 | Անտառագիտություն և պաշտպանական անտառաբուծություն | 3 | 6 | 48 | 42 |
| 3 | Շրջակա միջավայրի մոնիտորինգ | 4 | 8 | 64 | 56 |
| 4 | Էկոլոգիական և ագրոնոմիական հետազոտությունների մեթոդներ | 2 | 4 | 32 | 28 |
| 5 | Կամընտրային առարկա | | | | |
| | **Կամընտրային առարկաներ** | | | | |
| 5 | Ագրոանտառաբուծություն<br>Կայուն գյուղատնտեսության պրակտիկ փորձ | 5 | 10 | 80 | 70 |
| 6 | **Արտադրական պրակտիկա - 8 շաբաթ** | 15 | | | |
| | ***Ընդամենը 7-րդ կիսամյակում*** | **31** | **32** | **256** | **224** |
| ***8-րդ կիսամյակ, 10 շաբաթ*** | | | | | |
| 1 | Մենեջմենթ և մարքետինգ | 2 | 3 | 30 | 30 |
| 2 | Էկոլոգիապես անվտանգ գյուղատնտեսական արտադրանք | 4 | 6 | 60 | 60 |
| 3 | Կլիմայի փոփոխություն և կայուն զարգացում | 4 | 6 | 60 | 60 |
| 4 | Տեխնածին ազդեցություն և էկոլոգիական ռիսկ | 3 | 4 | 40 | 50 |
| 5 | Թափոնների օգտահանման տեխնոլոգիաներ | 3 | 4 | 40 | 50 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 6 | Ֆինանսական պատրաստվածություն | 2 | 3 | 30 | 30 |
| 7 | Կամընտրային առարկա | | | | |
| | **Կամընտրային առարկաներ** | | | | |
| 7 | Համայնքների էկոլոգիա<br>Բնապահպանական գյուղաշ մարտահրավերներ | 4 | 6 | 60 | 60 |
| | ***Ընդամենը 8-րդ կիսամյակում*** | **22** | **32** | **320** | **340** |
| | **Դիպլոմային աշխատանքի պաշտպանություն** | 10 | | | |
| ***Ընդամենը*** | | **240** | **244** | **3232** | **2832** |

* Առարկան ավարտվում է ստուգարքով

** Մոդուլի մեջ ներառված յուրաքանչյուր առարկա ավարտվում է գիտելիքի պարտադիր ստուգմամբ

*** Առարկան իր մեջ ներառում է քաղաքացիական պաշտպանության հիմունքներ, արտակարգ իրավիճակներում առաջին բուժ. օգնություն, աղետների բժշկություն, բժշկագիտության և երեխաների առողջապահության բաժինները

**** Բույսերի ֆիզիոլոգիա առարկան 3-րդ կիսամյակում սահմանել 4 կրեդիտ, 64 լսարանային, 56 արտալսարանային ժամաքանակով

Բույսերի կենսաքիմիա 3-րդ կիսամյակում- 3 կրեդիտ, 48 լսարանային 42 արտալսարանային ժամաքանակով

***** Մանրէակենսաբանություն 3-րդ կիսամյակում-5 կրեդիտ, 80 լսարանային, 70 արտալսարանային ժամաքանակով

Հավելված 2

## Մասնագիտության կրթական ծրագրի բաղադրիչների և շրջանավարտի կոմպետենցիաների համապատասխանության կառուցվածքային մատրից

| Առարկայի անվանումը | Ծրագրի կրթական վերջնարդյունքները | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ԸԿ 1 | ԸԿ 2 | ԸԿ 3 | ԸԿ 4 | ԸԿ 5 | ԸԿ 6 | ԸԿ 7 | ԸԿ 8 | ՄԿ 1 | ՄԿ 2 | ՄԿ 3 | ՄԿ 4 | ՄԿ 5 | ՄԿ 6 |
| Բուսաբանություն | | | | | | | | | V | V | V | | | |
| Հայոց լեզու | | | | V | | V | | | | | | | | |
| Հայոց պատմություն | V | | | V | | | | | | | | | | |
| Օտար լեզու (ռուսաց լեզու) | | | V | V | | V | | | | | | | | |
| Բարձրագույն մաթեմատիկա | | | V | | V | | | | | | | | | |
| Կիրառական ինֆորմատիկա | | | | | V | V | | | | | V | V | | V |
| Գյուղ. էկոնոմիկա | | | V | | | | | | V | V | V | V | | V |
| Օտար լեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն) | | | | V | V | V | | | | | | | | |
| Հասարակագիտության մոդուլներ (Հայոց պատմություն, Մշակութաբանություն, Քաղաքագիտություն,Փիլիսոփայություն) | | V | | | | V | | | | | | | | V |
| Ֆիզիկա կենսաֆիզիկայի հիմունքներով | | | | | | | | | | V | V | | V | |
| Հայոց լեզու և խոսքի մշակույթ | V | V | | V | | V | | | | | | | | |
| Ընդհանուր քիմիա | | | | | | | | | | V | V | V | V | |
| Կենսագործունեության անվտանգություն և քաղպաշտպանություն | | | | | V | | | V | | | | | | |
| Բույսերի գենետիկա | | | | | | | | | | V | V | V | | |
| Բույսերի ֆիզիոլոգիա | | | | | | | | | | V | V | V | | |
| Բույսերի կենսաքիմիա | | | | | | | | | | V | V | V | | |
| Հողագիտություն | | | | | | | | | V | V | V | V | V | |
| Մանրէակենսաբանություն | | | | | | | | | | | V | V | | |
| Ագրոէկոլոգիա և շրջակա միջավայրի պահպանություն | | | | | | V | | V | V | V | V | V | | |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Վիճակագրություն բիոմետրիայի հիմունքներով | | | V | | V | | | | V | V | | | | V |
| Ագրոքիմիա | | | | | | | | | | V | V | V | | |
| Օրգանական գյուղատնտեսության հիմունքներ | | | | | | | | | | V | | V | | V |
| Այգեպտղաբուծություն | | | | | | | | | | | V | | V | V |
| Էնտոմոլոգիա | | | | | | | | | | V | V | V | | |
| Ֆիտոպաթոլոգիա | | | | | | | | | | V | V | V | | |
| Երկրագործություն | | | | | | | | | | V | | V | V | |
| Բանջարաբուծություն | | | | | | | | | | V | | V | | |
| Բուսաբուծություն | | | | | | | | | | V | | V | | |
| Ագրոլանդշաֆտագիտություն | | | | | | V | | V | | V | V | | | V |
| Էկոլոգիայի հիմունքներ | | | | | | V | | V | V | | V | | V | |
| Շրջակա միջավայրի ազդեցության գնահատում (ՇՄԱԳ) և էկոլոգիական նորմավորում | | | | | | V | V | V | V | | V | | V | V |
| Անասնաբուծական և բուսաբուծական համակարգերի ազդեցությունները շրջակա միջավայրի վրա (կամընտրային) | | | | | | | | | | V | V | V | | |
| Սոցիալական էկոլոգիա (կամընտրային) | V | V | | V | | | | | | V | V | | | |
| Ջրային ռեսուրսներ և շրջակա միջավայր (կամընտրային) | | | | | | | | | V | V | V | | | V |
| Կենսաբազմազանության պահպանության էկոլոգիական հիմնախնդիրներ | | | | | | V | | V | V | | V | | V | |
| Բնօգտագործում և էկոլոգիական դեգրադացիա | | | | | | V | | V | V | V | | | V | V |
| Ագրոէկոտուրիզմ | | | | | | V | | V | V | V | V | V | | V |
| Էկոհամակարգային ծառայություններ (կամընտրային) | | | | | | | | | V | V | V | | | V |
| Թվային տեխնոլոգիաները | | | V | V | V | V | | | V | V | V | | | V |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| գյուղատնտեսական համակարգերում (կամընտրային) | | | | | | | | | | | | | | |
| Նորարարական և վերականգնվող էներգիայի աղբյուրներ (կամընտրային) | | | | | | | | | v | v | v | | v | v |
| Մարգագետնաբուծություն կերարտադրության հիմունքներով | | | | | | | | | v | v | v | | v | |
| Անտառագիտություն և պաշտպանական անտառաբուծություն | | | | | | v | | v | v | v | v | | v | v |
| Շրջակա միջավայրի մոնիտորինգ | | | | | | v | | v | v | v | v | | v | v |
| Էկոլոգիական և ագրոնոմիական հետազոտությունների մեթոդներ | | | | | | v | | | v | v | | | v | v |
| Ագրոանտառաբուծություն (կամընտրային) | | | | | | | | | v | v | v | v | v | v |
| Կայուն գյուղատնտեսության պրակտիկ փորձ (կամընտրային) | | | | | | | | | v | v | v | v | v | v |
| Մենեջմենթ և մարքետինգ | | v | v | | | | | | v | | v | | | v |
| Էկոլոգիապես անվտանգ գյուղատնտեսական արտադրանք | | | | | | v | v | v | v | v | v | v | | v |
| Կլիմայի փոփոխություն և կայուն զարգացում | | | | | | v | | v | v | v | v | v | v | v |
| Տեխնածին ազդեցություն և էկոլոգիական ռիսկ | | | | | | v | | v | v | v | v | v | | |
| Թափոնների օգտահանման տեխնոլոգիաներ | | | | | | v | | v | | v | v | | v | v |
| Ֆինանսական պատրաստվածություն | | | v | | | | | | | | | | | v |
| Համայնքների էկոլոգիա (կամընտրային) | v | | | | | v | | | v | v | v | v | v | v |
| Բնապահպանական գլոբալ մարտահրավերներ (կամընտրային) | | | | | | | | | v | v | v | v | v | |
| Պրակտիկա | | | v | | v | v | v | v | v | v | v | v | v | v |

*Հավելված 3*

***Բենչմարքինգ (ՄԿԾ-ի համահունչությունը նմանատիպ այլ ճանաչված ՄԿԾ-ների հետ) առանձին կցվում է***

**Հավելված 4**

# ՀԱՅԱՍՏԱՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## ԱԳՐՈՆՈՄԻԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

**Հաստատված է**
**ՀԱԱՀ-ի ֆակուլտետի գիտական ________ խորհրդում**
**“___” ____ 20__ թ.**

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ (ՊՐԱԿՏԻԿԱՅԻ) ԾՐԱԳԻՐ

**«Ագրոէկոլոգիա» կրթական ծրագրի ուսանողների համար**

**ԵՐԵՎԱՆ 20__**

**1. Պրակտիկայի ընդհանուր բնութագիր**

ՈՒսումնառության ընթացքում աշխատանքային կիսամյակի սկզբունքով գործնական հմտությունների, կարողությունների ձևավորում և ամրապնդում՝ ստացած տեսական գիտելիքների հիման վրա:

**2. Պրակտիկայի նպատակը և խնդիրները**

**2.1. Պրակտիկայի նպատակը/ները՝**

Ծանոթացնել գյուղատնտեսական և բնապահպանական ուղղվածության տնտեսությունների և կազմակերպությունների կառուցվածքին, գործունեության առանձնահատկություններին, կիրառվող տեխնոլոգիաներին, հնարավորություն տալ ուսանողին զարգացնել, կիրառել և ամրապնդել մասնագիտական տեսական գիտելիքներն ու կարողությունները:

Ուսումնասիրել հաշվետվությունները, արտադրական գործընթացները, մշակության տեխնոլոգիաները, ապագա ագրոէկոլոգի մոտ ձևավորել արտադրական գործունեության ընթացքում աշխատելու կարողություններ և հմտություններ:

**2.2. Պրակտիկայի խնդիրները՝**

- Ընդհանուր և հատուկ մասնագիտական դասընթացներից գիտելիքների ամրապնդումը, մասնագիտական հմտությունների և կարողությունների զարգացում:
- Տվյալ մասնագիտության շրջանակներում անհրաժեշտ մեթոդների, կարողությունների և ունակությունների կատարելագործում:
- Աշխատանքային թիմում ընդհանրական և մասնագիտական գործունեություն իրականացնելու կոմպետենցիաների զարգացում:
- Ավարտական աշխատանքի պատրաստման համար պրակտիկայի վայրի ենթակառուցվածքների օգտագործումը, ելակետային տվյալների հավաքագրում:

**3. Պրակտիկայի կրթական վերջնարդյունքները**

Ակնկալվում է, որ պրակտիակայի հաջող ավարտին ուսանողը կկարողանա՝

- ✓ Ներկայացնել կլիմայակայուն գյուղատնտեսական գործելակերպեր:
- ✓ Իրականացնել էկոլոգիապես անվտանգ սննդամթերքի արտադրության գործընթացներ:
- ✓ Հայտնաբերել գյուղատնտեսական արտադրության ապակայունացնող գործոնները, մշակել կայունությանը նպաստող միջոցառումներ:
- ✓ Ապահովել բնական ռեսուրսների կայուն կառավարման մոտեցումներ:
- ✓ Մշակել թափոնների վերաօգտագործման մոդելներ:
- ✓ Առաջարկել հողի էկոլոգիական վիճակի բարելավման տեխնոլոգիաներ:

**4. Պրակտիկայի անցկացման հնարավոր վայրերը և ժամանակահատվածը**

**4.1. Պրակտիկայի անցկացման հնարավոր վայրերը՝ առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ և այլն:**

**4.2. Պրակտիկայի անցկացման ժամանակահատվածը՝ համաձայն ՄԿԾ-ի:**

Պրակտիկաները կազմակերպվում են ՀՀ գյուղատնտեսության և բնապահպանության ոլորտի առաջատար կազմակերպություններում և տնտեսություններում՝ ՀՀ ՇՄՆ վարչություններ, ՀՀ տարբեր մարզպետարանների գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչություններ, ՀՀ ՇՄՆ «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ, «Նաիրիան» ՓԲԸ, «Կանաչ արահետ» ՀԿ, ՀՀ ՇՄՆ Անտառային կոմիտե և Հայանտառ ՊՈԱԿ-ի համապատասխան մասնաճյուղեր, ArLeAm ՍՊԸ, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, «Մասիս Տոբակո» ՍՊԸ Հաղթանակի մասնաճյուղ (Տավուշի մարզ), «Էկոգլոբ» ՍՊԸ, «Պրոֆալ» ՍՊԸ, «ՕՌՎԱԿՕ» ՓԲԸ, Ոսկեհատ ՈՒՓՏ, «Արզնի տոհմային ԹՏԽ» ԲԲԸ, «Սևան ազգային պարկ», Երևանի քաղաքապետարանի «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ, «Խոսրովի անտառ» պետական արգելոց ՊՈԱԿ և առաջատար ֆերմերային տնտեսություններ:

**5. Պրակտիկայի կառուցվածքը և բովանդակությունն ըստ պրակտիկայի ծրագրի**

Աշխատանքային կիսամյակի սկզբունքով կազմակերպված պրակտիկայի ընդհանուր ծանրաբեռնվածությունը կազմում է 30 կրեդիտ:

| **Պրակտիկայի բաժինները (փուլերը)** | **Ծանրաբեռնվածություն** | | | | **Արդյունքներ** |
|---|---|---|---|---|---|
| | | **ժամեր*** | | **օրեր** | **ընթացիկ ստուգման ձև** |
| | **կրեդիտներ** | **ընդհանուր** | **գործնական աշխատանք** | **ինքնուրույն աշխատանք** | |
| | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| Ընդհանուր ծանրաբեռնվածությունը ըստ պրակտիկայի ծրագրի | | | | | *Հնարավոր է հղում կատարել պրակտիկայի գնահատման թերթիկին կամ այլ նյութի վրա* |
| 1. Նախապատրաստական փուլ | | | | | |
| 2. Արտադրական փուլ | | | | | |
| 3. Հետազոտական փուլ | | | | | |
| 4. Համապատասխանության գնահատման փուլ | | | | | |
| 5. Ինֆորմացիայի վերլուծություն | | | | | |
| 6. Հաշվետվության կազմում | | | | | |

*Պրակտիկայի ընդհանուր ծանրաբեռնվածությունը կրեդիտներով և ժամաքանակով լրացվում է հետևյալ սկզբունքով՝ 1 կրեդիտը ներառում է 30__ աշխատանքային ժամ /որի մեջ կարող են մտնել տեսական նյութի ուսուցումը, գործնական աշխատանքները, հանձնարարությունններն ու առաջադրանքները Պրակտիկայի ժամաքանակի մեջ մտնում է նաև հաշվետվութան նախապատրաստումը:
** Օրինակ՝ պրակտիկայի նախապատրաստական փուլ (անվտանգության տեխնիկայի բացատրություն և այլն), արտադրական փուլ (փորձարարական, հետազոտական), ստացված ինֆորմացիայի մշակում և վերլուծություն, պրկտիկայի հաշվետվության պատրաստում:

## 6. Պրակտիկայի ատեստավորում

### 6.1. Պրակտիկայի ատեստավորման ձևը

Պրակտիկայի ատեստավորումը կազմակերպվում է աշխատանքային կիսամյակի ավարտից հետո՝ երկու շաբաթվա ընթացքում: Ատեստավորմանը ուսանողը պետք է ներկայանա գնահատման թերթիկով, հաշվետվությունով և սահիկաշարով: Ատեստավորումն իրականացվում է բանավոր ելույթի ձևաչափով, դեկանատի կողմից նշանակված գրաֆիկի համաձայն՝ համապատասխան մասնագիտական հանձնաժողովի կողմից:

### 6.2. Ատեստավորման անցկացման ժամանակահատվածը

" ___” _______ 20__ թ.-ից “___” _______ 20__թ.

**6.3. Գնահատումն իրականացվում է բաղադրիչներով և չափորոշիչով, որոնք ներկայացված են աղյուսակ 2-ում:**
**6.4. Պրակտիկայի գնահատման թերթիկ (կցվում է)**
**6.4.1. Պրակտիկայի ամփոփման և գնահատման տեղեկագիր (կցվում է Հավելված Բ)**

**Աղյուսակ 2**

| Գնահատման բաղադրիչներն ու չափորոշիչները | | |
|---|---|---|
| Կազմակերպության կողմից ստացված գնահատականը | | Համալսարանի կողմից ստացված պրակտիկայի գնահատականը |
| 70 % | | 30 % |
| Գործնական աշխատանքների գնահատում | Անհատական աշխատանք | Ամփոփիչ հաշվետվության ներկայացում |
| 50 | 20 | 30 |

Քննարկված և հաստատված է ____________________________ ֆակուլտետի խորհրդի նիստում
“ ___ “ ________________ 20__թ. արձանագրություն № __

Ամբիոնի վարիչ ___________________________ (Ա.Ա.Հ.)
(ստորագրություն)

## ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

| Հ/հ | Ուսանողի ազգանունը, անունը | Ստուգման գրքույկի համարը | Կրեդիտը | Գնահատման գործոնները (%) և դրանց փաստացի ստացած միավորը 100 միավորային համակարգով* | | | Չն/ Չթ | Բազմագործ-նային համակարգով հաշվեկշռված գնահատականը | | | Դասախոս(ներ)ի ստորագրությունը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | գնահատման թերթիկի արդյունքներ, % | գրավոր հաշվետվություն, % | հաշվետվության բանավոր ներկայացում, % | | 100 միավորային համակարգով | 20 միավորային համակարգով | տառային համակ. (A+ -ից C-) | |
| ***1*** | ***2*** | ***3*** | ***4*** | ***5*** | ***6*** | ***7*** | | ***8*** | ***9*** | | ***10*** |
| 1 | | | | | | | | | | | |
| 2 | | | | | | | | | | | |
| 3 | | | | | | | | | | | |
| 4 | | | | | | | | | | | |

Հավելված 5

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

**Պրակտիկայի վայրը** ………………………………………………………………………

**Կազմակերպության պրակտիկայի ղեկավարի**

**անուն, ազգանունը** …………………………………………………………………………

**Զբաղեցրած պաշտոնը** ………………………………………………………………………

**Հեռախոսահամարը**………………………… **էլ. փոստ** …………………………………………

**Մասնակցի անուն, ազգանունը** ……………………………………………………………

**Ֆակուլտետը** …………………………………………………………………………………

**Մասնագիտությունը** …………………………………………………………………………

**Կուրսը** ………………………… **ուսումնական տարին** …………………………………………

**Պրակտիկայի ժամանակահատվածը**…..…………………………………………………………

| Խնդրում ենք գնահատել մասնակցին հետևյալ գործոններով | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Հ/հ | Գործոններ | Գերազանց, 10 բալ | Լավ, 7 բալ | Բավարար, 4 բալ | Անբավարար, 0 բալ |
| 1. | Պրակտիկայի հաճախումներ՝ ըստ սահմանված ժամանակացույցի | | | | |
| 2. | Պրակտիկայի վայրի աշխատակիցների հետ շփվելու կարողություն | | | | |
| 3. | Աշխատելու պատրաստակամություն | | | | |
| 4. | Ընդհանուր վարք / կարգապահություն | | | | |
| 5. | Ազնվություն | | | | |
| 6. | Նախաձեռնողականություն | | | | |
| 7. | Վերլուծական մտածողություն | | | | |
| 8. | Խնդիրները հայտնաբերելու կարողություն | | | | |
| 9. | Նպատակասլացություն | | | | |
| 10. | Մասնագիտական պատրաստվածություն | | | | |

| Ձեր ընդհանուր կարծիք |
| --- |
| |

| Խնդրում ենք նշել վերջնական գնահատականը՝ գումարելով նախորդ աղյուսակի բալերը, օրինակ 74/B | | | |
| --- | --- | --- | --- |
| < 40 (D) | 40-60 (C) | 61-80 (B) | 81-100 (A) |

| Կցանկանայի՞ք հաջորդ տարի Ձեր կազմակերպությունում ընդունել նման մասնակցի? | |
| --- | --- |
| ԱՅՈ | ՈՉ |
| Եթե այո, ապա մենք հաշվի կառնենք Ձեր կազմակերպությունը հաջորդ տարվա պրակտիկայի պլանի կազմման ժամանակ | Եթե ոչ, ապա նշեք պատճառը |
| | |

| Առաջարկություն |
| --- |
| |

____________________________ ____________________________

(օր, ամիս, տարի) (ստորագրություն)

Շնորհակալություն համագործակցության համար

ք. Երևան, Տերյան 74, www.anau.am, հեռ.՝ 012545713, էլ. հասցե՝ internship@anau.am